



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. Բ.

ՏԵՐ ԅՈՒՍԷՓ ՊՕՐՆՕՆԵՆՆ

ԱՐՈՌԱԿԱՆ ԵՒ ԱՏԵՆԱՆՔԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ

ՆԵՐՍԻՍ ԷՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՆԱԿԻ ՊՕԼԻԹ

Ի ՏՊԵՐԵՆԻ Հ. ԳԵՅՕԼԻԲ

- 1953 -

ՍԵՐԵՐ ✓

73

1/6



1/6

281.6
2-70
պ



Սերեր.

73

2002

Ա Ռ

ՏԵՐ ՅՈՎՍԷՓ ԳՕՐՃՕՆԵԱՆ

ԱՏԵՆ ԱԳՊԻՐ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ

«Չօտարի զհետ ո՛չ երթիցեն . այլ փախեցեն
'ի նմանէ , զի ո՛չ ճանաչեն զձայն օտարաց . . .
բանզի վարձկան է , և չէ՛ փոյթ նմա վասն ոչ-
խարայն » (Յովհ . Ժ) :

Զ Ե Ռ Վ Ը Ն Ի Ս անցաւ « Բանի մը մտերմական խորհրդա-
ծու թիւններ » անուամբ մօտերս տպուած այն տետրակը որ ձեր
դիւանին առաջարկուելովքններ էք , ու մէջը անպարտճ բան մը չէք
գտեր , այլ մանաւանդ չի գիտցողներուն միտք լուսաւորելու , եւ որբերնի
հանգիւցնելու բաւական սեպեր էք . վասնորոյ և պաշտօնական կեր-
պիւ մը այն տետրակին հրատարակուելուն հրամանն ալ տուեր էք :

Կարդացինք այն տետրակը ծայրէ 'ի ծայր , և , ներէ մեզի ձեր
բարձրութիւնը , մէջը ուրիշ բան չի տեսնիր բայց եթէ յանդուգն
և այլանդակ ստուծիւն , խաբեբայութիւն և զրպարտութիւն .
Որով չէ թէ միայն չէք կրցեր արդարացընել զձեզ ու ձեզի նման
ազգիս և ուղղափառ հաւատքին պատուհասք ըլլող անձինքը , այլ
որ անօրէնութեանց լուսն է , չեմք գիտեր ի՞նչ գաղանի դիտաւ-
ւորութեամբ մը , մէկ կողմէն՝ անիրաւութեան , օրինականացու-
թեան , մտրութեան և անկրթութեան գէմ մաքառող ժողովուրդը՝
այլանդակ մեկնութիւններով ընդդէմ՝ Սուրբ գահին գանգատող
և բամբաստող ձեւացուցեր էք , և մէկալ կողմէն՝ ազգիս հին օրէն-
քը և իրաւունքը սուտ ու մուտ պատմութիւններով բճացնել
ուզեր էք : Այն օրէնքը և իրաւունքը՝ որոնց պաշտպանութեանը
համար՝ քանրչորս տարի առաջ ազգը լիջից ձիւնապատ լեռնե-
րուն վրայ իւր արիւնը թափեց , իւր հարստութիւնը բճացուց :
Ահաւասիկ ձեր պաշտպանած տետրակին բոլոր պարունակութիւ-
նը և նպատակը որուն մէջ ճշմարտութեան նշոյլը անգամ չի կայ :

(475988) 81
41



(13251-58)

29811

29811-11

1881

Վասն որոյ նոյն տեսարակին հեղինակը անիրաւ դատի մը ձեռք զարկած ըլլալը հասկընալով և իւր անուընը աշխարհիս առջեւ չի խոյտառակելու համար չորս հատ տանգըլուսի գիրերու տակ պահուեր՝ և խորամանկութեամբ մը ձեր վրայ նետելով ամեն պարտականուածութիւնը՝ ազատեր է ինք։ Եւ որովհետեւ դուք ձեր ստորագրուածութեամբ, պաշտօնական կերպիւ՝ այն տեսարակին հրատարակմամբը ուզեր էք զձեզ աշխարհիս ծանօթ ընել, ուստի և մենք կը պարտաւորինք յիշեալ հեղինակին դէմ՝ զրուցելու ամեն խօսքերնիս հարկաւ ձեզի ուզըլէ եւ՝ այնոյն ներքով մը որ խորոջ ըլլաւ հասկընալու։

Վասն զի այն տեսարին պատասխանատուութիւնը ՚ի պաշտօնէ և հրատարակաւ ձեր վրայ առած էք։

Եթա և առաջ, համարձակութիւն կառնելք հարցնելու ձեզի. յանձնորհիդ առած այն ատենադպրութեան և սթոռակալութեան ծանր պաշտօնները գիտէք արդեօք ինչ են։ Խոհեմ ըլլալով մը, Լապիսոպոսին և Գլեքին ու ժողովրդեանն մէջ խաղաղութիւն, հաւասարակշռութիւն և սէր պահել։ Ահաւասիկ այն պաշտօններուն առաջին նախապէս. կը թողումք ուրիշ ծանր պարտականութիւնները որոնք Ինքնիկի լեռներուն վրայ իւր վարժութիւնը ընող անձի մը կարողութեանէն շատ վեր են։ Իսկ դուք այս պարտքերուս բոլորովն սոցիալականով և մայրաքաղաքիս ժողովուրդը՝ չեմք գիտեր որ կողմի ակամար ժողովրդեան մը հետ շփոթելով, այնպիսի դատի մը հաւանութեամբ և պաշտպանութեամբ ստորագրութիւննիդ գնելով հրատարակեր էք որ չէ թէ խաղաղութեան և սիրոյ՝ այլ աւելի խտրութեան և զայրութի կրկին պատճառ մը եղաք։ Այսպէս ազգային եկեղեցւոյս ամենաբարձր և պատկառելի պաշտօնները՝ սոցիալութեան ու մոլութեան ձեռքը խաղալք մը եղեր են այսօր։ Դուք Աթոռակալ և Ատենադպիր տէր, թէ որ ինքզինքնիդ քիչ մը կըռէիք, այս բարձր պաշտօններէն շատոնց հրաժարելով, այս օրուան օրս ժողովրդեան մեծամեծ վնասակար, մեկ կողմէն՝ ձեր Մեծաւորին կիրքերը յաղեցնող անզգայ գործիք մը չէիք ըլլար, և մեկալ կողմէն՝ զանոնք անմտաբար դուրս թափելով՝ այսչափ խոյտառակութեան պատճառ չէիք իտար։

Դուք չէիք որ խապերէն սկզբ տեսարակին համար եղած առաջին ժողովքին մէջ շփոթելով՝ եօթը հարիւր անձանց առջեւ ակամայ

խոստովանեցաք թէ ձեր Մեծաւորը հմուտ է և տեղեակ այն գար-
չելի տետրակին, ՚ի ուր չէիք որ Մօնսիները Հիլերօհն առ Գ. Սեվ-
լիան գրուած թուղթին պատասխանելը ծանծաղամտութեամբ ձեր
վրայ առած այնպիսի տմարդի պատասխան մը տուէք, որով պարտա-
ւորեցիք զՄօնսիները ամեն բան ճշմարտութեամբ յայտնել և
զձեզ խայտառակել¹ : Եւ դուք դարձեալ մեծ համարձակութեամբ
մը այս խարդախ տետրին պատասխանատուութիւնը վրանիդ կառ-
նէք : Իիտցէք Ատենադպիր ու Աթոռակալ տէր, սր աշխարհ ա-
մենայն ծանօթ է ձեր կարողութեանը աստիճանին, զոր դուք մի-
այն չէք ճանչնար. և ամեն բանի մէջ կը նետուիք առանց գիտ-
նալու առանց հասկընալու : Սակայն պատմութիւնը շատ պատ-
ուաւոր անուն մը չի պատրաստեր կոր ձեզի ու ձեր մտելիմնե-
րուն համար :

Այսչափ ձեզի հրեմբայ հասկըցընելէն վերջը կը փութամբ հա-
մառօտ կերպով մը եղծելու ձեր պաշտպանած տետրին խարդախ
յօդուածները, Համառօտ կերպով մը ըսինք վասն զի գուցէ և
քիչ ատենէն « Բաղաբականութիւն Հասունեան » ըսուած գրքին
մէջ ամեն բան տեղն ՚ի տեղը պիտի տեսնէք :

1. Տես Մ. Հիլերօհն խտաբերէն վերոյիշեալ գրքին ու հեղինակներուն վրայ հրատա-
րակած դատաստանագիրը :





ՅՕԴՈՒԵՑ՝ ԼՈՒՋԻՆ

Ազգային եպիսկոպոսաց ընտրութեանը մէջ ազգին իրաւունքը:

Ամեն բանէն առաջ մէկգի էր թողունք քննելու՝ թէ առաջին ժամանակները Արեւելք ու Արեւմուտք Եպիսկոպոսաց ընտրութիւնը ի՞նչ կերպով էր, և թէ Արեւելեան ազգաց սուրբութիւնները և սահմանադրութիւնները ի՞նչպէս էին: Ասոնց վրայ ուրիշ անգամ մեր ընթերցողներուն կատարեալ տեղեկութիւն պիտի տրուի: Հոս համառօտ պատասխանատուութիւննիս զիներեր երկարորէն ասոնց վրայ առանձին առանձին ճառել:

Կը մնայ մեզի Ատենադպիր վարդապետին դիւանէն ելած տեսրին առաջին յօդուածին պատասխանը տալ:

Դուք, Ատենադպիր և Աթոռակալ Տէր, Հասուն գերապայծառին եպիսկոպոսութեան ու նախագահութեան ընտրութիւնը օրինաւոր ցուցնելու համար երկու պատճառ յառաջ կը բերէք: Առաջինը՝ իբր թէ «մեր ազգին Քահանայապետական դասակարգութիւնը ջնջուած՝ և այսպէս ժողովրդեան իրաւունքը կորստված ըլլալով, վերանորոգութիւնը Առաքելական Գահին իշխանութեանը կը վերաբերի եւ այլն»: Երկրորդ՝ իբր թէ «հարիւր տարու ընէ՛ ՚ի վեր դրուած ազգային եպիսկոպոսները ու նախագահները միշտ և ուղղակի սուրբ Աթոռէն ընտրուեցան, և ոչ թէ ժողովրդեան հաճութեամբ և ընտրութեամբ»: Եւ այսպիսի խօսքերով, անշուշտ, ազգային այս մասին ամեն իրաւունքը ջնջել կը ջանաք:

Սակայն մենք կը հարցնեմք ձեզի: Ս'եր ապէք իւր յիշեալ իրաւունքը ե՞րբ, ո՞ւր և որով հրամանաւ կորսնցուց, և ի՞նչ

պէս ջնջուեցաւ այն : Գիտենք որ ազգային պատմութեանց քաջ տեղեկութիւն մը չունենալով գուցէ դժուար է ձեզի ասոր պատասխանը տալ : Բայց նոյն պատմութեանց գրքերը ամենուն առջեւն են , և դուք , որչափ ալ կատէք նէ ազգային գրքերը , բացէք գոնէ զանոնք ու աչք մը նետեցէ՛ք և կը տեսնէք հոն յայտնի և որոշ որ հարիւր տարիէն քիչ մը առաջ , ազգիս մէջ Բաղկեղունեան ըսուած ժողովուրդը , որ հիմայ Բաթումի կը ըսուի , կառավարող եպիսկոպոսները ի՞նչ ազգէ էին , լատի՞ն չէ՞նէ բնիկ հայ : Նոյն ուղղախառ եպիսկոպոսները ուսկի՞ց և որո՞վ հաւանութեամբ արդեօք կընտրուէին : Եւ անկից վերջը ժամանակին այլ և այլ պատահարաց ու ձախողութեանց պատճառաւ , ժողովուրդը շատ մը արտորներ ու թշուառութիւններ կրելով՝ մինչև իր բնիկ ազգային եպիսկոպոսներն ալ կորսնցուց նէ , անոնց հետ մէկ տեղ մի թէ իր անջնջելի իրաւունքն ալ կորսնցուց : Ան երանելի եպիսկոպոսները իրենց մահուամբը ազգային իրաւունքն ալ միթէ մէկ տե՞ղ առին տարին : Երբ որ մեր ժողովուրդը՝ թէ և քիչու որ՝ ՚ի վերայ այս ամենայնի ՚ի սուրբ] ուսաւորչէ՛ սկսեալ մինչև ց՛ Բաղկեղունեան ժողով՝ և անախ յաջորդութեամբ և շարունակ իր ուղիղ հաւատքը պահելով մինչև մեր օրերը եկեր հասեր է , այս հայ ժողովուրդը կըսեմք , ժամանակիս դժբաղդ պարագաներէն ստիպուած , իր ազգակից եպիսկոպոսները կորսնցուցեր է նէ՛ իր իրաւունքը ի՞նչպէս կորսուեցաւ , ո՛ւր , ե՞րբ , ո՞վ ջնջեց զայն . ո՞վ սորվեցուց ձեզի զայս կամ ո՛ւր կարդացիք դուք զայն : Միթէ Տ . Գասպարօն դա՞ս տուաւ ձեզի զայդ , արդարեւ մեր խելքը չի հասնիր ասոր . թերևս Ատենադպրութեան ու Աթոռակալութեան պաշտօնին հասնելու է մարդ՝ որ կարենայ խելք հասցնել :

Գանք երկրորդ խնդրոյն : “ Հարիւր տարիէ ՚ի վեր ազգային ամեն եպիսկոպոսները ու նախագահները միշտ և ուղղակի Սուրբ Աթոռէն ընտրուեցան և ոչ թէ ազգիս հաճութեամբ և ընտրութեամբ ” կըսէք : Այլանդա՛կ ստուծիւն :

Նախ և առաջ յիշել հարկ է որ սակից հարիւր կամ հարիւր յիսուն տարի առաջ Բաղկեղունական կամ Կաթումի ըսուած հայ ժողովուրդը երբ կարող չեղաւ իւր ազգային եկեղեցիներուն մէջ իր դաւանանքը արձակ համարձակ դաւանելու ,

այն ժամանակը հարկ եղաւ կամաց կամաց քաշուիլ ու լատին եկեղեցեաց դիմել . որովհետեւ այն ատենները անհնար էր իրեն սեպհական եկեղեցի մը կամ եկեղեցական ազատ գլուխ մը ունենալ ինչպէս որ սենի հիմա . Ուստի քանի որ մեր ժողովուրդը լատին եկեղեցիներու երթեւեկելու յաճախեցին , կ'—Պօլսոյ լատին Առաքելական փոխանորդն ալ այս ժողովուրդին վրայ իւր իշխանութիւնը գործածելու սկսաւ , որուն այն ժամանակը պէտք էր ակախոյ լուել , վասն զի հիւր էր այն ժողովուրդը , և լատին եկեղեցիներու կարօտութիւնն ունէր , և չէր սուգեր զանի վշտացընել , այլ և այլ պատճառներու համար :

Եղաւ ժամանակ , ինչպէս վերը պատմեցինք , որ այս ժողովուրդեան ազգային եպիսկոպոսներն ալ չի մնացին : Եւ զի ազգիս ուղղափառութիւնը թող չէր իտար ապօրինաւոր ճանապարհաւ ազգային եպիսկոպոս մը ձեռք բերելու , ուստի և այս քանին համար հարկ եղաւ լատին եպիսկոպոսին առաջարկել , Եւ արդարեւ այն ժամանակը ազգը իւր ազատ հաճութեամբ Սերասեան Աթանաս վարդապետը առաջարկեց լատին Ս'նսինեօրին , որ 1758ին եպիսկոպոս ձեռնադրեցաւ այն : Այսպէս ազգը իւր հին սովորութեանը և օրինացը յարմար որոշեց , ընտրեց և առաջարկեց յիշեալ եպիսկոպոսը :

Ասոր վրայ տարիներ անցան և լատին եպիսկոպոսք , գուցե քանի մը գօլէճցւոց ստիպելովը , իրենց միայն սեպհականնել ուզեցին մեր իրաւունքը : Վասն որոյ այն ժամանակը և ժողովուրդը գրգռեցաւ ու ասկից ծագեցաւ ազգին ու Ս'նսինեօրին մէջ երբեմն երբեմն սաստիկ վեճեր այս նիւթիս վրայ , վասն զի յիշեալ Աթանաս գերապայծառը վախճանելէն ետքը , ազգիս մեծագոյն մասը զՄարտեան Անտոն վարդապետը կուզէր իրեն եպիսկոպոս , և ոմանք ժողովուրդեան մեծագոյն մասին դէմ գուրիչ մը կուզէին : Այս վեճիս մէջ լատին Ս'նսինեօրը մեկ կողման միայն հակամտելուն համար բողոք եղաւ սուրբ Աթոռին , որ ազգիս փախչին յորմար զՄարտեանը եպիսկոպոս ձեռնադրեց . Այսպէս Աթոռակալ և Ատենադպիր տէր , երբեմն լատին եպիսկոպոսին վնասութեամբ , եւ երբեմն սուրբ Աթոռին անխղտիս ընդդէմութեամբ ըսածնիդ , ընդհանուր ազգին հաճութեամբ և որոշելովը եղած է միշտ այս .

պէս յարատեւելով՝ մինչև 1825 տարւոյն Սարուշեան Պօղոս վարդապետին պատահարը, որուն վրայ այսպէս կը գրէ ձեր դիւանին բղիսած հռչակաւոր տեսրակը : Ինչո՞ք ժամանակն ցաւի պարտաներսն պարծասաւ Սարուշ Պօղոս վարդապետը այն որին եպիսկոպոս չի յերևագրեցաւ . սասորէ այն սրբազան Քահանայապետը ինքնազարթ խածո՞ ունոր սեղը ընտրեց Փափազեան Վերոք ֆերայաշատը եւ եպիսկոպոս ըրաւ շան եւոյն : (երես 11) : Ինքնագիււտ պատմիչը այս խօսքերը շարելէն վերջը կաւելցրնէ : Սա որքը պարտաներսն քասանն կը ցոցընէ՝ ինչ որ ֆին մնկեալ քոթոնեան ժամանակն սա ժողովուրդը եր ոգիայն եպիսկոպոսները ընտրելու ոտնեւին երասունս մը չի սանեցեր : (երես 12) :

Դուք Մթողաղալ մը, դուք Մտենաղալեր մը ինչպէս չամըչ ցաք այսպիսի ստութիւնները վաւերացրնել ու հրատարակել , դուք այն ժամանակները դուք Բոքընիկի լեռներուն վրայ զբաղած ըլլալով չէիք գիտեր անցած դարձած դէպքերը , սակայն գտնէ այն ատենուան բոլոր թղթակցութիւնը անգամ մ'ալ ձեռքերնիդ չանցաւ . կամ թէ՛ ժամանակակից մարդկանց չի հարցուցիք արդեօք ճշմարտութիւնը ստուգելու : Ա՛յ՛ , ո՛ւր Մթողաղաղութիւն , ո՛ւր Մտենաղաղութիւն , ո՛ւր դուք : Ինչո՞ք թէ որ դուք ձեր այս պաշտօններովը անգամ չի կրցաք ճշմարտութիւնը ստուգել սորվեցէք ուրեմն մենէ զայն , թէ որ սկանջ ունիք լսելու :

Եթիս առաջին կը հարցընեմք ձեզի , « թէ որ Ս. Ս. Իււոն Ս. Քահանայապետը՝ 1825 օգոստոս 21 ին զՍարուշ Պօղոս վարդապետը ինքնաշարժ կամօք ընտրեց » նէ , ինչո՞ւ համար հապա այն ատենն եպիսկոպոս չի ձեռնադրեցաւ : Վասն զի այն որին զՍարուշ վարդապետը ո՛չ եթէ ազգին լո՛ւրիւնը կուզէր , այլ մէկ մաս մը միայն : Ուստի թէ և սուրբ Մթողը ընտրեր էր զայն , այլ անշուշտ ազգիս իրաւանցը և խաղաղութեանը նկատմամբ եպիսկոպոս չի ձեռնադրեց : Սակայն և յետոյ տարիներէ վերջը սոյն այս վարդապետը իրեն յարմար ատենելով ազգը նախագահ սուղեց , Հրուով ալ այն ժամանակը հաստատեց , ինչպէս սիսի պատմեց վերջը : Ահաւասիկ այն ճշմարտութիւնը զոր դուք կեղծելով բոլոր ազգը խափել կուզէք : Ուստի տեսա՞ք հիմայ որն է պարզ պարտաներսն ըսածնիդ . Ու ազգային եպիսկոպոսաց ընտրութեանը մէջ ժո-

դովրդեան որչափ իրաւունք ունենալուն խելքերնիդ ասկե՞ց մի-
Նայց առաջ երթամք : Երկրորդ անգամ կը հարցնեմ՝ ձեզի, թէ որ
Ժ. Ռ. Վեռնի Ս . Վահանայազեղը ինքնաշարժ կոծո՞ Սարու Պօղոս վարդապե-
տին որչը ընորեց զՓափողեան Վեռո՞ Վերապայծառը ե- եռնիպոս ըրաւ զանի :
Ե- թէ ասոր ժամանակը այսինչն 1830 ին աղբակն ապարտիկնը որչի ունեցաւ .
ե- այն ժամանակը Եւստիւսիան գտնը Նախաբանական Արտուր կոնքնեց , (երես
11 = 12) հապա ինչո՞ւ համար նոյն փախազեան եպիսկոպոսը նա-
խագահական Աթոռին վրայ չի նստաւ . այլ անոր տեղ լուսահոգի
Նուրիճան գերապայծառը անցաւ : Ասանկ ըլլալուն պատճառը
ինչ էր . ինչո՞ւ , քանը ասանկ վերջոցաւ զանազան նկարանց համար ըսելով
լուսեան կանցնիք : Վասն զի ձեր բանին չիգար , սակայն ժամա-
նակակից դէպքեր են ասոնք՝ որոնց յիշատակը շատերուն մտքին
մէջ անջնջելի կեցած են դեռ , թէ որ դուք կը լուքէք՝ մենք կը
յայտնեմք , և ահաւասիկ ճշմարտութիւնը :

Այն ատենները Աստուածատուրեան Մանուկ Ամիրային տու-
նը ազգովին ժողովք ըլլալով Նուրիճան Անտոն վարդապետը ազ-
գիս փոխանորդ եպիսկոպոս ընտրեցին և սուրբ Աթոռին առաջար-
կեցին : Իսկ ձեր ազգակործան կողմնակցութիւնը՝ այլ և այլ խար-
դախ ճամբաներ ՚ի գործ դնելով՝ երբոր բոլոր ազգը Նուրիճանին
անկեղծաւ կապակեցին , և ահա ազգային ընտրութեանը հակառակ
յանկարծ փախազեանը եպիսկոպոս ձեռնադրեցաւ : Եւ ասկից ա-
ռաջ եկան ազգիս զանազան թշուառութիւններ , անհաշտ հակա-
ռակութիւններ որոնց դառն պտուղը եղաւ՝ 1828 ին սոսկալի սք-
տորը , մինչև և այց արար Տէր եւ ողորմութեամբն Աստուծոյ գը-
տաւ ժողովուրդը իւր երկնապարգեւ աղատութիւնը :

Այս դէպքերէս վերջը , Պիոս Բ. Ս . Ռահանայապետը աղէկ
մը տեղեկանալով այն ամեն չարեաց , աղետից ու թշուառութեանց
բուն պատճառը և այս ազգակործան ընտանի երկպառակութեան
ծագումը , ասոնց ամենը քննելով և հասկնալով կրտսեմք ազգիս ի-
րաւունքը հաստատեց , փախազեանը իլմիր՝ և Նուրիճան Անտոն
Գերապայծառը Սայրաքաղաքիս Նախագահական աթոռին վրայ
նստեցընելով՝ ազգին կրկին որոշմանը համեմատ . վասն զի որչափ
ալ սքտորէն առաջ ազգը զանիկայ ընտրեր էր ալ նէ , սքտու-
րը դադրելէն վերջը 1830 և փետրվար 27 ին կ = Պօղոս Վեռնի .

Թաղը եկեղեցականներէ և աշխարհականներէ բաղկացեալ ընդհանուր ժողովքին մէջ չորս գլխաւոր եկեղեցականներուն վրայ քուէ-ձգեցին ու Սուրբ Աթոռին ներկայացուցին . Եւ որովհետեւ լուսահոգի Նուրիճանը ամենէն շատ քուէ ունեցողն էր, ուստի և իրաւամբ Սուրբ Աթոռէն Նախագահական Աթոռին արժանացաւ . Եւ այսպէս Հռոմ՝ չէ՛ թէ ազգային օրէնքը և իրաւունքը ջնջել կուզէ, զոր օրինակ դուք այնպէս ցուցընել ուզելով կը գրգռէք կը խռովէք զժողովուրդը, այլ միշտ կը պահպանէ և կը գործադրէ զանոնք :

Ուստի հասկըցա՞ք, իմացա՞ք հիմա ճշմարտութիւնը, ո՛ր անմիտ մարդիկք : Ասոնք երազ չեն, ցնորք չեն, մեր ժամանակակից պատմութիւններն են . և դուք ի՞նչ համարձակութեամբ կելլէք ու յայտնի ստութեամբ մը կըսէք թէ՛ Սուրբ Աթոռը ազգին սս ֆորժուանման սեպտով՝ ինքորդինն Ֆերժեց : (երես 13) . Այս թուղթը ինչո՞ւ չէք ցուցընել մեզի : Վերջացուցէ՛ք ուրեմն ձեր ստութիւնները, և կամայ ակամայ խոստովանեցէ՛ք դուք ալ մեզի հետ, թէ արքունի առաջ և ետքը ազգային իրաւունքն է իւր եպիսկոպոսը ընտրել, որուն համար 1828ին հարիւր յիսուն հազար քսակէն աւելի սուտեց ժողովուրդը, երբ դուք Բոքքընէք՝ չեմք գիտեր ինչ բանի կը զբաղէիք :

Գանք երկրորդ Նախագահին Մարուշեան Պողոս Գերապայ-Ծառին ընտրութեանը :

Այս լուսահոգի Նախագահիս ազգովին ընտրութիւնը որչափ ալ յայտնի էնէ, դիւանաբուղիս տեսարակը ուզեր է սեթեթեթ բանիւք ծածկել ու ճշմարիտ պատմութեան սուտ դիմակ մը անցընել, որ աւելի աղէկ կըլար իրենց դէմքը անցունելով բոլոր աշխարհէս ծածկուէին . Ուստի յիշեալ տեսարակը կըսէ, Նորինն Վերապայծառը էր վերին ժամանակները ազաւեր էր Սուրբ Աթոռին ու Սուրու Վերապայծառը էր նաև օգնիչ որոտի . (երես 1½) . Բայց ո՞ւր է այս թուղթիս օրինակը : Յիրաւի, սա միայն աղէկ գիտենէք որ այն ժամանակը այս օրուան ձեր Մեծաւոր Հասունեան Անտոն վարդապետը, ինչպէս ըսեր էինք, իր խորամանկ ու խաբուսիկ բնաւորութեամբը հնարք գտեր էր Նուրիճան Գերապայծառին քարտուղարը ըլլալու՝ և այսպէս անոր վերջին ժամանակները ամեն իշխանութիւնը յափշ-

տակելու, և որոգայթալից մեքենաները լարելու, երբոր ամենուն աչքը դեռ գոց էր իր վրայ:

Ուստի այն ատենը կրտսմք Հասունեան Մնտոն վարդապետը ուզած ամեն բանը կը գրէր և յանուն Նուրիճանի կրտստ քաղբէրու կը զմուէր: Թերեւս այս կերպ թուղթերէն մէկը ըլլայ յիշեալ տետրակին խօսածը: Մաթթեօզ մի թէ կարելի՞ է որ Նուրիճանին պէս Նախագահ մը աղգէն ծածուկ այսպիսի գործ մը կատարէր: Մնահաւատալի բան է այդ ու թէ որ այդպիսի թուղթ մը կայ նէ՝ անշուշտ Հասունեան Մնտոն Մտենադպրին գործնէ, վասնորոյ և ծածուկ պահուեր է օրինակը:

Մոգ Նուրիճան գերապայծաւը մեռնելէն վերջը 1838 տարուոյն փետրվարի 24 ին ազգային ժողովք մը եղաւ Զիտուս փրկիչ մտայր եկեղեցինայ մէջ, ուր ամենուն հաւանութեամբը և հաճութեամբը ընտրեցաւ Բ. Նախագահ աղգիս Մարուշեան Պողոս վարդապետը: Եւ նոյն ժողովքը սուրբ Մթողի նամակ մը գրելով՝ զանիկայ իրեն նախագահ խնդրեց, որ և Հռոմ ըստ օրինաւոր խնդրոյն աղգիս հաստատեց: Զիշեալ ստախօս տետրը այս պարզ ու յայտնի պատմութեան վրայ ուղեւորվ քող մը ծածկել ասանկ կը գրէ: Սորք Մտուր րեանելով որ առ խնդիրս էր որոշման յարմար էր, առանց բնեւեւ աղբն ըրածը, և առանց յիշու զնիկայ, ինչ էրիք ընդհանր, կարգեց: (Երես 14): Օգարմանալի՛ բան, կարծես թէ այն ատեն Հռոմ և աղգը մանեթիքն եղեր են, աղգը հոս ժողովով ընտրած ժամանակը, միանգամայն սուրբ Մթողի ալ որոշած ըլլայ: Պատուելի աթողակալ ատենադպիրը, որ ամեն ճիգը կ'ընէ, ըստ սովորութեան Հռոմայ կոնդակներուն պաշտօնական կերպիւ գրուած ընդհանր, կարգեց, բառերը շարելու իր տետրակին մէջ: Հապա ինչու համար կը լուէ և չի յիշեր Մարուշ գերապայծառին ընտրութեանը վրայ սուրբ Մթողի նարդար գանգատանօք աղգիս ուղարկած թուղթը, որուն մէջ այսպէս գրած էր «գուրք » ձեր առջին ստորութեանը նման երեք անձինք մեզի պիտի առա » ջարկէիք, իսկ այս անգամ մէկ անձ մը միայն ներկայացու » ցիք »: Այս թուղթը աղգիս աւագանին կը յիշէ դեռ: Մի թէ մեր պատուելի ատենադպիրը չի տեսա՞ւ զայս, կամ իր Մեծաւորին ձեռքէն չի կրցա՞ւ առնել արդեօք, չէ՛ նէ մի իրենց

բանին ձեռք չի տալուն համար կամաւ լռեց . Այսպէս է և լուսահոգի Մարուշ նախագահին ընտրութիւնը :

Վերջապէս եկանք հասանք Հասուն գերապայծառին ապօրինաւոր ընտրութեանը : Ասոր օրը ազգը որչափ առաւել յայտնի և որոշ կերպով պնդեց իւր ընտրութեան իրաւունքը նէ , այնչափ ալ Հասուն գերապայծառին շողքորթ ատենադպիրը , ճրջմարտութիւնը բոլորովն ծածկելով , ուղածին պէս կը յիշատակէ այն դէպքերը , որոնք մեր ամենուն աչքին առջեւը կատարեցան : Սենք , այն պատմութիւնները ճշտիւ և հաւատարմութեամբ կը գրենք հոս բայց համառօտիւ , և յետոյ ստութեան տետրակին խարդախութիւններն ալ յառաջ կը բերենք . ինչպէս ըսինք , ուրիշ անգամ ասոնց ընդարձակը ամեն մարդ պիտի կարգայ :

Հասունեան Անտոն վարդապետը վառասիրութեամբ՝ և ազգիս յախագահական Աթոռը ձեռք անցնելով ամեն բան աւերելու կործանելու՝ և յետոյ այն աւերակներուն վրայ չենք գիտեր ինչ բան հաստատելով՝ ինքնիշխան ինքնահրաման տէր ըլլալու համար ունեցած սաստիկ բաղձանքը և կիրքերը , բոլոր ասոնք կրօնք հարկաւոր սեպեցին դարձեալ ոտք հանել ազգակործան հին կողմնակցութիւնը . Ուստի և տգիտութիւն , տխմարութիւն , թրջնամութիւն , նախանձ , կոպտութիւն , կրօնամոլութիւն , ազգատեցութիւն , շահասիրութիւն , վերջապէս այն ամեն բան որ չի կրնար համաձայնիլ գիտութեան , կրթութեան ու առաքինութեան հետ ամեն կողմէն եկան միացան , և մէկ մէկու ձեռք տալով ազգակործան գունդ մը կալմեցին , որն որ այս օրուան ազգիս ամեն աղէտից ու թշուառութեանց աղբիւրը եղաւ . Հասուն վարդապետը մէկ կողմէն զասոնք իրեն թե և թիկունք ըրած , մէկալ կողմէն քանի մը աշխարհական երևելիները խաբելով , վատրկած՝ մեծամեծ խոսամունքներով ու կեղծ ընթացքով մը , առանց ձայնի յիշխանութենէ յիշխանութիւն դիմելով օր յաւուր յառաջացաւ :

Մարուշ գերապայծառին վերջի տարիները , Հասունեան վարդապետը և իւր կողմնակցութեանը գլուխ ըլլող ասի և եկեղեցականք ու աշխարհականներ , այլ և այլ տեղ առանձին առան-

ձին գաղանի ժողովքներ ընելէն վերջը, սկսան Հռոմայ նամակներ գրելով, Մարուշ գերապայծառին վրայ գանգատները շատցընել, ծեր է ըսելով, անկար է, իր թէմը չի կրնար կառավարել եւ այլն եւ այլն : Մինչեւ պարտաւորեցին զՀռոմ գրելու Գ. Մարուշին որ զՀասունեանը իրեն օգնիչ խնդրէ : Այս է ահա այն տետրակին այդ խարդախ յօդուածը թէ Գ. Մարուշը վերջապէս նոյն սորբէ Աթոռէն խնդրեց, որ Հասուն Աթոռն վարդապետը իրեն օգնիչ եպիսկոպոս անուանէ : (երես 15) : Ինքնակամ և յօժար կամօք ուզելը՝ ստիպմամբ ուզելէն ո՞րչափ 'Հեռու է : Այս գաղանի կողմնակցութիւնը, զապագայն առանց խորհելու, իւր Կաննի մը ստորագրութիւնները իբրեւ բոլոր ազգիս գլխաւոր իշխանապետները ձեւացնելով և այնպէս համոզելով զՀռոմ, և ազգիս ապագայ խաղաղութեանը համար է ըսելով Հասուն Գերապայծառին յաջորդութիւնն ալ մէկ տեղ խնդրեց, Այս է խարդախ տետրին և այն ըսածը թէ՛ Խնայալից Կաննի յաջորդելու իրաւունքը սորբէ Աթոռը ցոռու : (երես 15) : Այսպէս Հասուն Գերապայծառը չէ թէ բովանդակ ազգիս այլ ազգակործան կողմնակցութեան մը գիտութեամբը միայն, Հռոմայ պաշտօնատէրներն ալ, զազգս ալ խաբեց ու առաւ նախագահութիւնը :

Հասուն Գերապայծառը՝ սասանկ խարդախութեամբ ազգային իրաւունքը ոտքի տակ առած՝ Նախագահութիւնը ստացաւ ըսելունիս սուրբ Աթոռին ինչ արատ կը բերէ, Աթոռակալ և Ատեւնազակիր տէր, հասկըցուցէք մեզն : Այն հոչակեալ տաճկերէն առակը չէք գիտեր որ կրտէ Արեւոյշա Կերէ Ֆելիա Կերէն : Ինչո՞ւ համար ուրեմն մեր կողմէն հրատարակուած տետրակին իմաստները և բառերը փոխելով յիմարաբար կը կոչէք, սոնն սորբէ Աթոռը կը Բամբասան կը իբրեւ օրինաւանց : Ասոնք ոչ այն տետրին և ոչ մեր մտքին մէջ տեղի ունին : Այս կերպ բամբասանքները դուք ձեր խօսքերուն և ձեր գիրերուն մէջը փնտռեցէք, Աս ըսելէն վերջը կը յիշեցնեմք ձեզն Քաշուր Խոխոք քահանային պատահարը, զոր աշխարհ ամենայն գիտէ ինչպէս Աղէքսանդրիոյ պատրիարք ընտրուելը, որ Եզիպտոսի փոխարքայ Տ. Մէհմետ Ալին զմուռը գողցած՝ սուա և շինծու թղթերով Հռոմայ պաշտօնատէրները խաբեր էր : Բայց որովհետեւ շուա կամ ուշ ճշմարտութիւնը երեւան կելլէ սուրբ Աթոռին սուղեւ, վասն որոյ քիչ ժամա-

նակէն այս ամեն խարդախութիւնները ստուգուելով Սանդ Օֆֆիցիօն բանտարկուեցաւ այն ամեն իշխանութիւններէ մերկացած : Թիէ որ այն ժամանակը Քարտուղար Քաբրանօ մը խաբուեցաւ նէ , միթէ Քարտուղար Պարնապոյի մը խաբուիլը կամ համոզուիլը մեծ և անկարելի բան մըն է : Սակայն ինչպէս այն ժամանակը նայնպէս և հիմա , ճշմարտութիւնը անյաղթելի ըլլալով ամեն իրաւունք իւր տեղը կը գտնէ : Ուստի յանուն Աստուծոյ , ձեր ամեն ըրածը Հոռոմայ վրայ նետելով բուճ տեղը մի զբարտէք զայն բոլոր ազգաց առջեւ :

Այսպէս Հասուն Գերապայծառը յաջորդութեան իշխանութիւնը ձեռք ձգած Պօլիս դառնալով ծածուկ պահեց զայն աշխարհ մինչեւ 1846 յունիս 22 . Սարուշ Նախագահին վախճանածօրը : Նոյն օրը վախճանելոյն յուղարկաւորութեանը ատեն ձայնաւոր Պատարագին մէջ ժողովրդեան բազմութիւնը երբոր լսեց սարկաւազին երգելը , « եւ ըստիս եպիսկոպոսոսդերոս մեր զտէր Աստուծոյն » զարմացաւ , զայրացաւ վասնորոյ և նոյն տարւոյն օգոստոսին ժողովք մը գումարեցաւ ՚ի Յիսուս Փրկիչ ուր հաւաքեալ էին երեսուն եկեղեցական և հարիւր քսան աշխարհական աւագանիէն և ժողովրդեան գլխաւորներէն բաղկացեալ : Այս ժողովքիս ներկայանալով և Հասուն Գերապայծառը՝ երբ յաջորդութեան կոնդակը ցուցուց , բոլոր ժողովուրդը խռովեցաւ : Եւ այս նիւթիս վրայ հոն ի՛նչ խօսքեր , ի՛նչ վէճեր եղան ամենուն ահնջին մէջ կը հնչէ դեռ . դուք միայն Աթոռակալ և Ատենադպիր տէր , մոռցեր էք զանոնք ու չէք յիշեր . բայց պատմութիւնը տեղն ՚ի տեղը պիտի յիշէ ՚ի զարմացումն ձեր և յամօթ և ՚ի նախատինս այն ամեն անձանց , որ խարդախ ու անարժան միջոցներով սուրբ պաշտօնները ձեռք բերած՝ բոլոր ազգ մը տակն ու վրայ բերելու կը գործածեն զանոնք : Վերջապէս այն ժողովքին մէջ երկար վէճերէն վերջը իշխանապետ Յակոբ Չելէպին բանին խռովութեան դիմելը տեսնելով , և ՚ի բարձումն ամենայն գայթակղութեանց յորդորեց համոզեց զազգը ընդունելու զայն , և այսպէս ժողովուրդն ալ ընդունեցաւ այն եպիսկոպոսը , որ աւանդ , քիչ մը ետքը ազգիս պատուհասը պիտի ըլլար : Սակայն նոյն ժողովքին մէջ թիւ ազգիս աղատութենէն առաջ վիգարութեան և

Թէ վերջը Նախագահութեան ընտրութեանց ժամանակը, ազգիս իրաւունքը մէկիկ մէկիկ ցուցնելն վերջը, մէյմ'ալ այսպիսի բան մը չի պատահելու համար յիշեալ իշխանապետին կամօքը, բողոք մը ըրին առ Հռոմ ծանուցանելով թէ՝ «այս գործողութեամբ ազ-
» գը իւր հին իրաւունքը չէ կորսնցուցած. ուստի և կը խնդ-
» րէ որ ասկէ ետեւ ազգային եպիսկոպոսաց ընտրութիւնը ու-
» թիշ ազգաց նման և մեր ունէ սերունդներու յարմար երեք անձինք
» սուրբ Աթոռին ներկայացնելով, այս երեք անձանց մէկը հաս-
» տատուի » :

Այս ժողովքը ամեն մարդ գիտէ, և այն բողոքը ստորագրողք չէ թէ միայն աշխարհականներն են. այլ և եկեղեցականք և նոյն ինքն Հասուն Գերապայծառին Աթոռակալը. Ուստի պատասխան տուէ՛ք մեզի. Թէ որ ազգը ընտրութեան իրաւունքը չուներ նէ ի՞նչ համարձակութեամբ ստորագրեցիք այն թուղթը դուք և ձեր Մեծաւորը ընդունեցաւ զայն. ի՞նչպէս Ս. Օ. Գրիգոր Պապին կոնդա-
կին դէմ բողոքելու յանդէնեցաք : Ա՛հ, կամայ, ակամայ խուտո-
վանեցէ՛ք մեզի հետ մէկ տեղ, և դուք ո՛ր ազգին օրէնքը և իրաւունքը շնջելու զինեալ ազգատեսցք, խոստովանեցէ՛ք կրտմք որ եպիսկոպոսաց ընտրութիւնը ազգիս անբռնաբարելի իրաւունքն է. ապաթէ ոչ ձեր ստորագրութիւնները կը դատաւ պարտեն զձեզ. Դուք, ձեր պաշտպանած անիրաւ դատը, որով տակն ու վրայ կընէք միշտ զազգը, արդարացընելու համար բուժ տեղը ամենուն առջեւը գրուած ու վաւերացած թուղթերուն մէջի հարկաւոր պարագաները ծածկելու՝ և ուղածնուդ պէս այլայլելու կ'աշխատիք : Բուժ տեղը Հասուն Գերապայծառը արդարացընելու համար՝ նոյն թուղթերուն մէջի քաղաքավարա-
կան ու պաշտօնական գրուածքները իբրեւ փաստ մը առաջ բե-
րելու ձեր ամեն ճիգն ու ջանքը կը թափէք : Վերջապէս բուժ տեղը կ'աշխատիք ցուցնելու ազգին, թէ Սուրբ Աթոռը մեր իրաւունքը չի ճանչնար ու կը մերժէ : Ընէ՛ք մեզի. Սուրբ Աթոռը ո՞ւր և ե՞րբ, և ո՞ր կոնդակով արգելած է ազգին այս իրաւունքը, ցուցուցէ՛ք մեզի յայտնի և որոշ այսպիսի թուղթ մը, Սի՛թէ Հռոմէն, ազգային վերոյիշեալ բողոքին տրուած պատասխանին մէջ գրեթէ այսպէս գրուած չէ՞ մի. « Ընդունեցանք ձեր թուղ-

» Թը , ու ժամանակիս պարագաներուն պատճառաւ ուշացու
» ցինք պատասխանը , հիմակու հիմա ասանկ գացէ՛ք՝ ժամանա
» կին Սուրբ Հայրը ձեզի կ'իմացընէ և այլն » . Արդ անանկ մէկ
հրպարակական բողոքի մը դէմ ասանկ պատասխան մը տրուելու
ըլայ նէ , ասկից ինչպէ՞ս կը ցուցընէք , ո՛ր խռովարար մարդիկ ,
Թէ Սուրբ Աթոռը ազգին ընտրութեան իրաւունքը բնաւ չէ՛ր
ճանչցած : Գիտցէ՛ք , ո՛վ դուք , որ այսպիսի միջոցներ
րու գիմելով՝ ո՛չ ձեր Ս'եծաւորը կ'արդարանայ և ո՛չ ազ-
գը իւր ասանկ դարուան անեղծելի իրաւունքը կը կորսըն-
ցունէ , այլ զձեզ միայն կը վնասէք ու կը խայտառակէք բոլոր ազ-
գաց առջեւ :

Այս ստոյգ պատմածներնէս յայտնի կ'երեւի որ ,


Ա. Ազգ մը Թէ և ու ժամանակ եպիսկոպոս չունենայ , ՚ի վե-
րայ այսր ամենայնի իր իրաւունքը ոչ երբեք կը կորսուի .

Բ. Ազգիս ազատութենէն առաջ եղած վեղարները ազգէն
կ'ընտրուէին .

Գ. Ազգիս ազատութենէն վերջը երկու առաքինի Նախա-
գահները ազգէս ընտրուեցան .

Դ. Հասուն Գերապայծառը միայն ազգային հին իրաւունքը
ոտքի տակ առնելով ընտրուեցաւ . Եւ այն իրաւունքները բոլոր-
ովն կործանելու համար ցուցուցած հակառակութիւնները , ա-
նիրաւութիւնները այնչափ խռովեցին զազգը , մինչեւ հարկա-
դրեցաւ մերժելու զինքը .

Այսպէս յիշեալ ստախոս տետրին առաջին յօդուածին պա-
տասխանը տալէն վերջը , գանք երկրորդ յօդուածին .



ՅՕԳՈՒԼՆՕՒ ԵՐԿՐՈՐԳՒ

Գաւառական եպիսկոպոսաց ընտրութեանը վրայ :

Նախ առաջին , Աթոռակալ և Ատենադպիր տէր , կը մերս ժեմք ձեր դիւանէն բղխած տետրին այն յօդուածը որով կուզէք ցուցընել թէ ժողովուրդը գաւառական Աթոռոց կանգնումը չուզեր : Ո՛չ , ժողովրդեան չուզածը այն բաները չեն , որոնք քրիստոնէական հաւատքին պատիւ ու օգուտ մը կրնան ըլլալ : Մի՛ մոռնաք որ ժամանակով այն Աթոռներուն հաստատութեանը առաջին դէմ կեցողը և բողոքողը դուք եղաք և ձեր մանրիմունները , ինչպէս պիտի ցուցընեմք յետոյ , Այլ ժողովրդեան ուզածը այն է որ չըլլայ թէ այս Աթոռներուն կանգնումը գաւառաց կարողութեանէն վեր՝ և եպիսկոպոսաց ընտրութիւնը ազգէս գաղտնի՝ և աթոռներուն վրայ նստողները քրիստոնէական հաւատքին պատուոյն և ժողովրդեան խաղաղութեանը և յառաջագիմութեանը վնասիչ մարդիկ ըլլան : Ահաւասիկ ժողովրդեան վախն ու գանգատը : Վասն որոյ և ձեր յիշեալ յօդուածին այս մասը ծածուկ նպատակաւ մը գրուած իբրև պարզ ստութիւն մը , պատասխանելոյ անգամ՝ արժանի չե սեպելով , կանցնիմք երկրորդ մասին :

Այս մասին մէջ , խարդախ տետրը ցուցընել կուզէ թէ Մայրաքաղաքիս ժողովուրդը , այսինքն ազգիս Աւագանին ու ազգային ժողովը , Պատրիարքով հանդերձ իրաւունք չունին գաւառական եպիսկոպոսաց ընտրութեան միջամուխ ըլլալու , և այս նիւթիս վրայ այսպէս կը գրէ : Պէնոյ ասալ զանի համարչիկ խոստովանելու հրապարակէ , որ դեռ զենի կրնար հասնուի , ինչ ինչ պատճառով գոտարանի եպիսկոպոսաց այս համայնի կրնայ ընտրութեանը Այս Պէնոյ ժողովուրդը շնորհակատ


Վեջ յիստ ըլլայ . ասոր վրայ շատ մտածեր են , իե որդեօտ սա բանն Վեջ այս
ժողովրդեան ցանկարանայը ո՞ր իրաւացի պարծաւ որոտած է , եւ դեռ վնէ հաս-
կընար : (երես 24) :

Արդարեւ շատ անմիտ ու ապուշ ըլլալու է մարդ որ այսպիսի
պարզ բանի մը չի կարենայ խելքը հասցընել . Եւ դուք Աթու-
ռակալ և Ատենադպիր սէր , որովհետեւ դեռ չէք կրցեր հաս-
կընալ , ուրեմն մենք հիմայ կը հասկըցընեմք ձեզի . աղէկ ուշ
դրէք :

Ամեն բանէն առաջ կը յիշեցընեմք ձեզի՝ որ մեր Քաթօլիկ Հայ
ժողովուրդը Մեծազոր Օսմանեան Տէրութեան հպատակ ազգե-
րէն մէկն է , որ վեհափառ կայսեր բարեգուծ և արդար հովա-
նաւորութեանը սակ իր երջանիկ օրերը կանցընէ , ճոխացեալ
Պատրիարքական իշխանութեամբ , և Երկոտասան Երեսփոխանիւ ,
երկուքն ալ Արքունի հրովարտակաւ հաստատեալ , որոնք Օս-
մանեան կայսրութեան մէջ բնակող բոլոր Հայ Քաթօլիկ ժողու-
վորդեան համար պատասխանատու են նոյն Տէրութեան առջին .
Ասոնց ձեռքն է ազգային թէ ընդհանուր և թէ մասնաւոր ամեն
կառավարութիւնը : Ասոնց կիցնայ ազգին մեծամեծ գործողու-
թիւնները սնորհինել . ասոնց կը վերաբերի ազգային ելեմուտքը
հոգալ . ասոնց՝ ազգային ամեն երեսնոց վրայ հսկել . ասոնց վեր-
ջապէս հետաւոր և մերձաւոր ժողովրդեան գանգատանացը ակնշ-
տալ , ու իրենց հանգստութիւնը և յառաջադիմութիւնը հո-
գալ : Ահաւասիկ որոնք են ձեր կոստանդնուպօլսոյ ժողովուրդը
ըսածնիդ և ի՛նչ իրենց պարտքերը ըստ Արքունի հրովարտակին ,
և ըստ օրինաց ազգիս . Ասոնք ձեզի յիշեցընելէն վերջը գանք
մեր ինզրոյն :

Գաւառներուն եպիսկոպոսներ պիտի դրուի , լաւ , բայց պէտք
չէ՞ արդեօք այս իշխանութիւնները իմանան , քննեն և հաւանին .
Ասոնց աուրքը ո՞վ պիտի վճարէ . ծանրութիւննին ո՞վ պիտի
վերցընէ . Տէրութեան առջև ո՞վ երաշխաւոր պիտի ըլլայ . Ար-
քունի հրովարտակները ո՞վ պիտի ընդունի . կոիւնները , վէճերը ,
գանգատները ո՞վ պիտի լսէ : Ասոնց ամենը կըսեմք ո՞վ պիտի
կատարէ . ձեր բարձրագոյն դիւանը արդեօք , Աթուակալ սէր ,
որուն ծախքը անգամ ազգը կը աուժէ . Չէ նէ մի Ազգապետը

73-2001
15233
1544
4759



և ժողովը , որ է ըսել ընդհանուր ազգը . Ուրեմն ինչպէս միջամուխ չըլլայ , չի քննէ և ըստ ձեր փափագին կոյր զկուրայն գործիք մը ըլլայ ձեր զարհուրելի կիրքերը յագեցընելու , 'ի կործանումն քաղաքաց և գաւառաց . Գիտենք որ ազգիս այս մասին միջամուխ ըլլալը՝ ձեր ազգակործան դաւակցութեանը բուրրովն զեն է և մնաս , վասն զի այն ժամանակը ժողովուրդը մոլի և անկիրթ մարդկանց գերին ու աւարը չըլար , ազգային լեզուն , իրաւունքները և օրէնքը՝ ազգատեաց անձանց ձեռք չեն ոչնչանար : Ասոր համար է ահա որ դուք չէք ուզեր այս գործքիս մէջ ազգին միջամուխ ըլլալը , վասն որոյ և ճայներունիդ բարձրացընելով կատաղաբար կը գոչէք : Ո՛ր երեսօնք կ'ընար Կոստանիս ժողովուրդը քառասունէն եղիսոյոսաց ընտրութեանը մասնակից ըլլալ : ու մասնակից չըլլալուն համար ինչ շատ ան զերապոյծաբար ու ինչ զտարբէր Ղապի բաժնուեւ , (երես 25) : Ո՛հ . զրպարտիչք ազգիս , ինչո՞ւ համար ժողովորդեան ձեզի դէմ արդար դանգաւանները նենգաւորութեամբ մը սուրբ Գահին կ'ուղղէք : Ժողովրդեան գանգաւոր ձեզի դէմ է . ձեզի որ , խորամանկութեամբ և խաբէսութեամբ ամեն անիրաւ գործքերնիդ իբրև Հոռուաց հրամանաւոր ձեւացընելով մէկ կողմէն սուրբ Աթոռին անուկը օտար ազգաց առջև բամբասուելու՝ և մէկայ կողմէն ուղղափառ ժողովրդեան սրտին մէջ , նոյն Աթոռին սէրը պաղեցընելու պատճառ կըլլաք : Ժողովուրդը կը գանգաւոր , վասն զի ինչպէս ըսինք , կուզէ որ այն ընտրութիւնները ըստ իւր իրաւանցը , ազգին գիտութեամբը և բարեկարգութեամբ ըլլայ , զոր օրինակ կրնէ ամեն ազգ : կուզէ որ , ինչպէս Նախագահական ընտրութիւնը , նոյնպէս և գաւառական ընտրութիւնները , գաւառաց ժողովրդեան յարմար , անոնց հաճութեամբը , Ազգապետին ու ժողովոյն քննելովը ըլլայ և յետոյ ծանուցուի , որուն որ պատշաճ է . որ և յարմար է մեր ու օտար ազգաց և եկեղեցւոյն օրինացը և սովորութեանց : Եւ այս կերպով ամենքը կը համոզուին , ամենքը գոհ կըլլան , ամենքը կ'ընդունին . նախանձու , թշնամութեան , նենգութեան և անվերջանալի կռիւներու տեղի չի մնար , և ազգը , սիրով և խաղաղութեամբ , իւր յառաջադիմութեանը , իւր երջանկութեանը հոգ կը տանի միայն , զորոնք կործանելու ելած էք դուք այսօր : Ա՛

հաւաստիկ ազգիս պարտքը , ահաւաստիկ և իւր փառագոր , Հասկը
ցա՞ք հիմնայ , ո՞վ անխիղճ մարդիկ ինչու համար է կ=Պօլոյ ժողով
վրդդեան գանգատը , ու ի՞նչ իրաւամբ և ի՞նչ պատճառաւ կու
զէ ազգը մասնակից ըլլալ այսպիսի գործողութեան : Ի՞նչ երե
սով ուրեմն համարձակեր էք գրելու թէ , գաւառական ընտրու
թեանց վրայ ժողովրդեան ըրածը , ուսնի անդիւրի գանգատ մը է , որ նոեա
օրորաչէն եկեղեցականներն ու գիտուն աշխարհականներն ալ երեւելէ անչինոք շար
զարմանի մէջ յիշեց (երես 25) : Չեր այս խօսքը ուրիշ բան չի յայտ
ներ բայց եթէ ձեր զրպարտիչ բնաւորութիւնը : Թի որ եւիս
կոպոսաց ընտրութեանը մէջ բանին ուղիղը , ճշմարիտը և արդա
րը պատմէիք նէ , այն անձինքը չէ թէ ազգին՝ այլ ձեր վրայ պիտի
արմննային զարմանային և մեզն երկինքէն մինչև երկիր իրաւունք
պիտի սային : Բայց որովհետև դուք ուզեր էք սուտովմտա
պատմութիւններով օտարաց առջև զազգը նուաստացընել . ուս
տի և մենք կը հարկադրինք հոս գաւառական եպիսկոպոսաց ընտ
րութեանը ինչպէս ըլլալուն ուղիղ բայց համառօտ պատմութիւ
նը ընել . որուն մէջ ձեր ամեն նենգութիւնները բացայայտ ե
րեւնալով՝ տեսնէ աշխարհ թէ որ կողմն է իրաւունքը , և ըստ
այնմ դատէ : Սակայն բանը ազէկ մը հասկըցընելու համար կը
բռնադատինք սկիզբէն առնելու խօսքերնիս :

Արդ՝ երբ բարձրագոյն Դոնէն ազգիս ազատութիւնը շնոր
հեցաւ , և Նախագահական Աթոռը հաստատեցաւ . Պիոս Բ .
Ս . Բահանայապետը Արեւելեան մեր և ուրիշ ազգաց սովոր
ութեանց ու սահմանադրութեանցը համեմատ այս Նախագահա
կան Աթոռն ալ զանազան շնորհքներով ճոխացոյց . որոնց գլխա
ւորն էր թեմական քանի մը եպիսկոպոսներ ձեռնադրել . զորօրի
նակ լուսահոգի Նուրիճան Նախագահին կոնդակին մէջ յայտնի կը
տեսնուի : Բայց այն ատեն առանձնայն մէկ քանին այս բանիս իրատ
խտովեցան ու հակառակեցան գաւառաց աղքատութիւնը պատ
ճառելով , մեաս կըլլայ ըսելով եւայն եւայն , և այնչափ գանգա
տեցան որ խտովութիւն մը չըլլելու համար՝ Հոսմ հրամայեց
Նուրիճան Գերապոյճառին՝ որ կոնդակին այս մասը ՚ի գործ չի
դնէ ուրիշ քանի մը մասերու հետ , սակայն այս հակառակութիւ
նը ուրիշ բանի համար չէր բայց եթէ չըլլայ որ վանականաց դա

սէն և կամ անոնց բարեկամներէն մէկը ըլլայ եպիսկոպոս , իստ ուրում յիշեալ առաքինի Նախագահը հոգւով չափ կը սիրէր զասոնք , իրենց ազգասիրութեանը , կրթութեանը և առաքելական շնաքերնուն համար : Ահաւասիկ եպիսկոպոսաց ձեռնադրութեանը արգելման բուն պատճառը , որ ինչպէս վերը ըսինք , չէ թէ ժողովուրդը՝ այլ ազգիս հակառակորդք ընդդիմացան նախ այն Աթոռներուն հաստատութեանը , վասնորոյ և անգործադրելի մնացին երկու նախագահից օրը :

Անցաւ ժամանակ եկաւ նստաւ դժբաղդաբար Հասունեան գերապայծառը Նախագահական Աթոռին վրայ : Ասոր սրտին վերքը ու ցաւը կաճէր ու կը սաստկանար ականելով բոլոր վանականաց յառաջդիմութիւնը իրենց գիտութեանը , ազգասիրութեանը , և կրթութեանը պատճառաւ , զորոնք իրեն յարմար ականելով ազգը իր մեծ երախտագիտութիւնը կը յայտնէր միշտ , և մինչեւ հեռաւոր գաւառներէն հրաւէր կուգար ասոնց : Ուստի և գրգռեցաւ Հասուն գերապայծառին նախանձը և սկսաւ իր մտքին դրած ծածուկ խորհուրդները աճապարել ՚ի գործ դնել , կործանելու , ջնջելու նախ Սխիթարեանները և ապա միւս վանքերը մի առ մի :

Այս ժամանակները , 1848 , Հռոմնոյ գահէն արտաքոյ կարգի գեսպան եկաւ առ դուռն (սմանեան Գ . Ֆերրիէրին : Հասուն գերապայծառը այս պատեհ առիթէն օգուտ քաղելու համար ամեն կերպ ծառայութիւնները գործքի դնելով վերջապէս վաստակեցաւ յիշեալ գեսպանը : Եւ՝ այլևայլ նիւթերու վրայ ամեն կերպ և աղէկ մը համոզելէն վերջը զինքը եպիսկոպոսաց ընտրութիւնն ալ հաստատելու ձեռք դրաւ . բայց որպէս զի օրինաւոր սեպուի այն , իր կողմնակից եկեղեցականներէն երեք կամ չորս անձինք գումարած , որոնց խոտտացեալէր արդէն եպիսկոպոսութիւնը , Առաքելական քննիչին առջեւ ժողովք կազմեցին ու ինչ որ իրենց բարի և օգտակար երեւցաւ նէ՛ հաստատեցին հոն , առանց ազգին իմացնելու : Ազգին իմացնել . . . բայց ի՞նչ յարգ ունի ազգը ասոնց առջեւ . միթէ տխմարաբար ստակ տալու համար եւ զած չէ՞ միայն ազգը :

Սակայն այս երթիւկէտութեանց լուրերը կամաց կամաց ժո-

ղովրդեան ականջը հասնելով շշուէչ և գանգատ կը լքուէր ատեն ատեն . Վասնորոյ ստիպուեցան անոնք ազգիս գլխաւոր իշխանները հրաւիրել . չէ թէ խորհուրդ ընելու՝ այլ եղած հաստատութիւնները անոնց ծանուցանելու . Բայց այս ամենայն որոգայթալից գործողութիւններէն ազգիս երեւելի ամիրայից սիրտը վշտացած ըլլալով՝ Ս . Ֆերրիէրիին հրաւիրանացը ատնցմէ մէկը չի գնաց , ուստի և հարկ եղաւ Հասունեան Գերապայծառին իր կողմնակից երկրորդական կարգի մարդիկը յառաջ բռնել : Այսու ամենայնիւ ասոնց մէջ գտնուեցան այնպիսի արդարասէր անձինք , որ ազգիս իրաւունքը պաշտպանելու ջանացին եպիսկոպոսաց ընտրութեանը մէջ . այս անձինքը նոյն գերապայծառը արէկ կը ճանչնայ , բայց ոչ ասոնց իրաւացի պատճառներուն՝ և ոչ ընդհանուր ազգիս գանգատներուն ականջ տրուաւ գերապայծառը և ուղածը որոշեց : Այդ անվաւեր ժողովքիս համար է ահա խարդախ սետրակին այս ըսածը . « Նոյնպէս ծոզովի մը մէջ աղբային Անուսիանաց ալ խնայուց . (երես 25) . Իբրեւ թէ ազգը ըստ ամենայնի ընդունած է ըրածները . սակայն այդպիսի ժողովքմը ո՛ւր և ե՞րբ ազգային ժողովք սեպուած է չեմք գիտեր . Գ . Հասունը այսպէս ծածկաբար ամեն բան կարգի դնելէն վերջը աճապարեց Հոռմ երթալ :

Այս ատեններս , բոլոր Եւրոպիոյ հետ մէկ տեղ իտալիոյ խռովութիւններն ալ հապիւ թէ վերջացած՝ և Պիոս Թ . Ս . Բաւհանայապետը այն ինչ իր թագաւորութիւնը ձեռք առած էր , Գ . Հասունեանը այս յաջող դէպքը իր վնասիչ խորհրդոցը յարմար սեպելով , սկսաւ քիչ օրուան մէջ ճանապարհորդութեան պատրաստութիւն տեսնել . Եւ որպէս զի Հոռմայ առջեւ ազգը բուրրովին իրմէ դու՛ն՝ և իրեն համամիտ ցուցընէ , իր մտերիմներուն ձեռօք և գաղտնի՝ իրմէ շարագրեալ թուղթի մը վրայ ազգէն քանի մը իշխաններուն ստորագրութիւնները դնել տուաւ . ոմանք ալ Սելվիեան Պատրիարքին համոզելովը , կարծելով թէ Հասուն Գերապայծառին ճամբորդութեան նպատակը ուրիշ բան չէ բայց եթէ Սուրբ Գահէն՝ առաջին Նախագահ Դուրիճան Գերապայծառին տրուած կոնդակին մէջի քանի մը արգիլեալ մասերուն հրամանը միայն պիտի առնէ բերէ , այս յուսով և առանց արէկ քրն-

նելու, անոնց վրայ իրենք ալ ստորագրեցին, իսկ մեկալնոնք, մտէ
'ի սոնկ սար ըսելով, ետ կեցան:

Այսպէս Հասուն Գերապայծառը առանց որոշ բան մը յայտ
նելու և առանց ազգային ժողովոյն հաւանութիւնը առնելու
այս թուղթերը ձեռք անցուցածին պէս՝ շուտ մը ճամբայ ելաւ
դէպ ՚ի Հռոմ՝ 1849ի օգոստոս 23ին:

Այս ատեն, ինչպէս յայտնի է ամենուէն, Ս. Քահանայապետը
դեռ իր Աթոռը դարձած չէր, և Գարտինալները ասդին անդին
ցրուած, գաղղիացուց ու աւստրիացուց բանակները Հռոմայ սե-
րութեան քաղաքները պաշարած, վերջապէս Քահանայապետը և
Գարտինալները շուարած կեցած ատեն, Հասուն Գերապայծառը
կը հասնի կայսթա՝ և անկից կանցնի կերթայ Հռոմ, և հոն կը
գանէ իւր մտերիմները վերոյիշեալ Սննախնետ Գէրբիբերին, Ս'ոն-
սինետր Վէսպասիանիին հետ, Այս շփոթութեան ժամանակ,
հազիւ թէ մէկ քանի Գարտինալներ Բորբակնատա ժողովը էին,
Գ. Հասունեանը ատենան կելայ և համարձակութեամբ մը կը կան-
չէ “ Հռոմէական սուրբ հաւատքը Արեւելքի մէջ իրձանելու-
ն է, իսկանակ լանցուցած պէտք է այս չարեաց առջևը առնել, դեղ
” ու դարման մը մտածել ”: Չայնակից եղան ասոր և իր մտե-
րիմ բարեկամները և վերջապէս հաւանեցուցին Գարտինալաց
ժողովը՝ գործքի դնելու իսկոյն այն անվաւեր հաստատութիւն-
ները որ ըրեր էին Ս = Պօլիս վերոյիշեալ և կեղեցականք ու աշխար-
հականք ՚ի ներկայութիւն Գ. Գէրբիբերի քննիչին, Հոն խարդա-
խութեամբ ձեռք բերած թուղթերն ալ բացաւ Հասուն Գերա-
պայծառը և ցուցուց վանոնք իբրեւ հաւանութիւն մը ընդհանուր
ազգէն: Ըսոնցմէ ՚ի զատ առաջ բերաւ, լուսահոգի Նուրիճանին
օրը, 1836ին գաւառական ժողովրդոց երկու եւսիսկոպոս խընդ-
րենին, որոնց խնդիրքը Նուրիճան Գերապայծառին արուած
կոնդակը հաստատելու համար էր: Նոյնպէս ցուցուց 1842 տար-
ւոյ իր կողմնակիցներուն աղերսագիրները որոնցմով Նախա-
գահական յաջորդութիւնը ստացեր էր: Նոյնպէս և 1844ին իր
կողմնակցութեան խորհրդովը գրուած՝ սահմանակից գաւա-
ռաց աղերսագիրները: Եւ դեռ ուրիշ թուղթեր որ Սուրբ Աթո-
ռէն ներողութիւն բերելու համար է ըսելով ուսմիկ ժողովուր-

գը կը խաբէին և ստորագրութիւն դնող դնողի կըլար . որոնց վրայ իրենք ուզածնին գրելով ստորագրութիւնները կ'աւելցընէին բուն իրենց ձեռքը . Գրեթէ այսպէս է գաւառներէն եկած ամեն աղերսագիրները . Վերջապէս այս շինծու թուղթերով ու այս կերպ վկայութիւններով՝ Հասուն Գերապայծառը հաւատացուց , հաւանեցոյց զժողովականները փութալու հաստատելու ժամ մը առաջ գաւառական նոր Աթոռները . վասն զի ինչպէս յիշեցինք ուղղափառ հաւատքը վտանգի մէջ է , ուստի և ժիր ու արթուն Հովիւներու կարօտութիւն կայ կը գոչէր միակերպ . Եւ երբ Սեծապատիւ Գարտինաւք՝ հարցուցին իրեն պզէս թէ եկեղեցականաց եւ թէ աշխարհականաց , հասանութիւնը ընտրութեան եղանակն եւ ընտրեալ անձանց վրայ , ըստ Արեւելեան մեր պզէն սովորութեանցը եւ օրինացը , հոս Հասուն Գերապայծառը իւր ամեն ճիգն ու ջանքը թափեց , և իր մտերիմ բարեկամներուն օգնութեամբը , լիագոյն իշխանութեան տէր և բովանդակ ազգիս կողմանէ երեսփոխան մը ձեւացընելով զինքը , Եպիսկոպոսութեան պաշտօնին արժանի ինը անձինք առաջարկեց . Սակայն ասոնցմէ վեցը յանուանէ ինքը նշանակած ըլլալուն համար , ըստ որում իւր մտերիմ բարեկամներն և օգնականներն էին , ան միջապէս և Ս . Աթոռէն եպիսկոպոս անուանեցան ասոնք . Ահաւասիկ ինչպէս Հասուն Գերապայծառը , մէկ կողմէն քաղաքական խռովութիւնները պատահ առիթ ըրած , և մէկալ կողմէն խարդախ միջոցներ ձեռք ձգած , յաջողութեամբ գլուխ տարաւ իր խորհուրդները , երբ ոչ գաւառական աթոռոց կանգնումը ազգիս խորհրդովն էր , ոչ ընտրութեան կերպը իր իրաւանցը յարմար էր , և ոչ ընտրեալ անձինք իրեն օգտակար էին .

Տեսա՞ք հիմա , իմացա՞ք և դուք , Ատենադպիր և Աթոռակալ տէր , այս աթոռներուն հաստատութիւնը ինչ կերպով ըլլալը , և եպիսկոպոսաց ընտրութեան եղանակը , ու ընտրեալ անձանց որպիսի մարդիկ ըլլալը . Վասն որոյ ասկից առաջ եկան գանգատանք , խռովութիւնք , գիշերային ձեռնադրութիւն , բողբոներ առ Հոռոմ և առ դուռն Աբբունի , եպիսկոպոսաց իրենց թեմերը երթալու արագելքը , ասոնց Գազդոց տէրութեան դիմելը , Սիւսիւ ար Եպիսկոպոսութեան գործոց պաշտօնատէր Բարձրապատիւ Ալի փաշային և յիշ

եալ դեպքանին խորհուրդները, մէկ խօսքով և ազգիս և բարձրագոյն Գրան և սուրբ Գահին և դեպքանաց անվերջանալի նեղութիւնները, շփոթութիւնները, որոնք մէկզմէկու յաջորդելով ու տեւելով մինչեւ ցայսօր, այսչափ ազգաց առջեւ յանիրաւի բամբասանաց նիւթ մը եղաւ Հռոմբուն ձեր պատճառաւ: Թի որ Հասուն Գերապայծառը և դուք իր Աթոռակալը ու ատենադրւպիրը, ձեր կողմնակ ցութեամբը հանդերձ այդ անխոհեմ, անվաւեր, խարդախ, միտախիչ ու խռովարար միջոցներուն առանց դիմելու, քրիստոնէութեան պարտուցը պատշաճ ու ազգիս իրաւանցը համեմատ կերպերով, գաւառաց և ազգային իշխանութեանց հաճութեամբը և որոշելովը կատարէիք նէ բոլոր այդ գործերը. ո՛հ, այն ժամանակը ոչ Ազգը, ոչ Հռոմ, ոչ բարձրագոյն Գուռը և ոչ դեպքանները այս յարատե նեղութեանց, յուզմանց մէջ չէին իյնար. և Հռոմ ալ այսչափ չէր բամբասուեր, և լուսահոգի Նուրիճան և Սարուշ նախագահներուն Աթոռը բովանդակ թեմին վարայ ունեցած ուղղակի եւ անմիջական իշխանութիւնը չէր կորսնցրնէր, զոր դուք հիմա զանտնք կուրանաք ձեր ստախօս տետրին մէջ (երես 20), Ու թի որ այդ մասին ձեր գրածը ճշմարիտ այնպէս է. ուրեմն ձեր անհաշտ թշնամութեանը մասնեցիք դուք այն ազգային Աթոռը, և մէկզմէկէ անկախ, ինքնիշխան, բացարձակ, հինգ կամ աւելի իշխանութեանց բաժնեցիք, ու Նախագահական անունը, օրի մէջ ցնդեալ սին սոսկ անխմատ բառ մը ըրիք: Տէրութիւնէ մէկ ազգապետի սակ ճանչցուած ազգ մը՝ հոգեւորին կողմանէ յանկարծ եօթնի, ութնի բաժնուի մէկզմէկէ անկախ Այս կերպ կառավարութիւնը հարկաւ վախճան մը պիտի ունենայ՝:

Յիշեալ ստութեանց տետրակը, թշնամութեամբ նախանձով լցեալ իր հեղինակացը նմանեցրնել ուզելով և զսուրբ Աթոռը կրտէթի՝ « Սուրբ Գահը արեւելեան սովորութեանցը ու ասհմանադրութեանցը յարմար Նախագահական ընտրութեան եղանակ մը » հաստատելու ձեռք դրած էր բայց ժողովրդեան արտունջները » և ապերախտ ընթացքը հարկադրեցին զՍուրբ Աթոռը դադրեցրնելու զայն » . կերեւի թի Հասուն Գերապայծառին Աթոռ

1. Տես մտերս կրկու Հասունեան քաղաքականութեան մէջ:

ուսկալ Ատենադպիրը , ինքզինքը Սուրբ Գահին խորհրդականացը մէկուն տեղը դրեր է . վասն զի Հռովմայ ժողովքներուն մէջ չի կատարուող գործոց պատճառները անգամ գիտցող կը ձեւացընէ զինքը : Չէ՛ , թէ որ յերաւի Սուրբ Գահէն գրեցիննէ իրեն այսպիսի բան մը , զոր ոչ երբէք կը յուսամք , այն ատեն յայտնի կըլլայ ամենուն որչափ զբարտեր է զազգը առ Հռոմ մեր Աթոռակալը , վասնորոյ և Հռոմ այդպիսի պատասխան մը տուեր է իրեն . Սահայն տեսարակին այն խօսքը վաւերացընելու ատեն պէտք էր խորհիլ զգոն Ատենադպիրը որ Հռոմ իրեն պէս չէ , ազգի մը բարեկարգութիւնը , խաղաղութիւնը իւր անյագ կրիցը չի զոհեր , թէ և իրաւացի պատճառ մըն ալ տեսած ըլլայ կը ներէ : Ուր թողունք որ , ինչպէս ըսինք , ժողովրդեան գանգատը իրեն դէմ չէ : Այս դասը մեր իմաստուն Աթոռակալ վարդապետին տալէն վերջը , կը հարցընեմք իրեն . որովհետեւ գիտէ կոր թէ Սուրբ Աթոռը իւր առջև միտքը ետքէն ձեռք առած սահմանադրութիւն մը կը ծանուցանէ մօտերս , ինչո՞ւ ուրեմն չի յայտներ ինչ կերպ սահմանադրութիւն ըլլալը ասոր , և զամենք երկբայութեան մէջ կը ձգէ : Մենք հիմակուրնէ կըսենք իրեն որ՝ չի կարծէ թէ սուրբ Աթոռը՝ մեր Աթոռակալին փախագին համեմատ սահմանադրութիւններ կընէ : Այնպիսի սահմանադրութիւններ կըսեմք որով Սուրբ Աթոռն ալ իր գերագոյն բացարձակ իշխանութիւնը չի գործածէ և միանգամայն ազգն ալ իւր ընտրութեան իրաւունքը կորսնցընէ : Եւ այսպէս ամեն իշխանութիւն Հասուն Գերապայծառին ու իր հաւատարիմ եպիսկոպոսներուն ձեռքը անցնին , որպէս զի ամեն ուղածնին դարձունեն իրենց մէջ գաղտնի ՚ի վնաս ժողովրդոց , զոր օրինակ ջանացին անոնք այսպիսի կանոն մը սահմանելու , բայց բարեբաղդաբար ՚ : Գունն ալ ու Ս՛ . տը Եպիսկոպոսն ալ դէմ կեցան : Գուցէ այս է և տեսարակին Արեւելեան սովորութեանց յարմար եղանակ ըսածը , որն որ խիստ յարմար է իրենց , բայց ազգիս համար մի միայն խռովութեան պատճառ մըն է : Այլ մենք կը փախաքինք ու կը յուսանք , որ Սուրբ Աթոռը այնպիսի սահմանադրութիւն ուղէ դնել՝ որ ժամանակով Արտաքին գործոց պաշտօնատէր բարձրապատիւ Ալի փաշային քաղաքագէտ և իմաստուն առաջար-

կութեանը համեմատ ըլլայ, որ է ազգապետին, ժողովոյն և պատ-
շաճ ըլլող եկեղեցականաց խորհրդովը ըլլալ ընտրութիւնը, որն
որ խիստ հաճելի է և ընդհանուր ազգին. վասն զի ազգը՝ Նախա-
գահական ընտրութիւնը Լախսկոպոսաց ձեռքը միայն չուզեր թու-
ղուլ, որոնց ամենեւին հաւատարմութիւն չունի, զի, կը պարտա-
ւորեն զմեզ յայտնի ըսելու, այն եպիսկոպոսները իրենց նախա-
գահին հակառակութեանը և ազգատեցութեանը հոգւով զանգ-
ուած անձինք են, ուստի և ժողովրդեան բոլորովին հակառակ,
նոյնպէս և գաւառներէն ալ անընդունելի. Սակայն դիւանա-
բուղի տետրը տե՛ս ինչ կրտէ այս մտայն. Գաւառներուն ժողովուրդը, ի-
րենց եպիսկոպոսներուն ընտրութեանը վրայո՛ւ քանքատ քը լընելն ՚ի զար, զար զար
ու իրին իրին թէ ժողովուրդէն ու թէ քղերէն սորաբերալ ծանուցաբերներ խրիբ եին,
որով Սորք Մետուն երանորոպար քոր շնորհալու եղեր են իրենց քաղաքները Լախս-
կոպոստան Մետուներ իաննուեւում, ու այն Մետուներուն ալ ար արժանի անկանց ընտ-
րուելուն վրայո՛ւ. (երես 26). Ո՛հ ծիծաղելի խաբեբայութիւն. Նախ
և առաջ այն ստորագրեալ ծանուցագիրները, որոնցմով սովոր էք
միշտ զաշխարհ խաբել, ինչպէս խարդախ ու անվայել ճամբով ըլ-
լալը վերը զւարցեցինք, ուստի ձեր ձեռքին մէջ գանուող թուղ-
թերը, թէ և երկինքէն իջած է ըսէք դուք, մենք կը հաստատենք
թէ ստութիւն կը պարունակին. վասն զի միշտ, բայց մշտ իրենք.
կամ դուք կը շինէք զանոնք, կամ կ'այլայլէք. Երկրորդ ցուցու-
ցէք մեզի ս'ը ժողովուրդը գոհ է իր եպիսկոպոսէն. Գաղատա-
ցիք Շիշմանեանին՝ խիստ բնաւորութեանն և շինած կտակնե-
րէն զգուած չե՞ն մի. Մրդուինցիք լսելով Աստարձեանին... բայց
թողումք մեռեալը իւր հանգստութեանը մէջ. Լըրվիւրմցիք, Սը-
չեցիք հաճի Գաւիթին բռնած անխոհեմ ընթացքին ու պարտ-
քերը շապրնելուն համար բողբքներ չարի՞ն մի. Պրուսացիք
Պահատուրեանին անկառավարութեանը համար գանգաւաներ չե՞ն
ըներ մի. Դրապիզանցիք ծառայութեանէ առաջ եկած Առաքել-
եանին ինքնահաւան ամբարտաւան բնաւորութեանը դէմ չե՞ն կրնա-
լով համբերել արդար գանգաւանին մինչև Աբբունի դուռը. և

1. Ներն մեզն այս անուններուն առջև Եպիսկոպոս բառը չի գննուու համար, վա-
զըն զի ասոնց ձեռնարկութիւնը ո՛չ որ տեսաւ, և հարցնողներուն բսին թէ գիշերը ձեռ-
նարկուեցան ասոնք:

բողոքներն մինչեւ Հում չի հասուցի՞ն մի, իւր ըսէք մեզի այս եւ պիսկոպոսները ի՞նչ օգուտ ըրին քրիստոնէութեան կամ ազգիս . ցուցուցէք մէկը՝ թէ որ կրնաք . Ուստի կարծես թէ վերին Նախախնամնութիւնն ալ այս ապօրինաւոր ընտրութեանց չի հաճելով վրէժինդիր եղաւ ժողովրդեանց . Աստարձեանը դեռ իր թեմը չի հասած վախճանեցաւ . Հաճի Գաւիթը անբուժելի հարուածով մը տազնապեալ թեմէն տարեզիր եղաւ . Առաքելեանը մերժուած հոս հոն շրջեցաւ . Ահաւասիկ խարդախ ու գաղանի գործողութեանց վերջը .

Այսպէս է Աթուակալ և ատենադպիր տէր , գաւառական Աթոռներուն կանգնումը , այսպէս է ընտրութեան կերպը և ասոնց յարմար են ընտրեալ անձինք . իւր մենք յայտնապէս ցուցնենով այս յօդուածին մէջ թէ ,

Ա. Ժողովուրդը ինչո՞ւ կը գանգատի .

Բ. Գաւառակից եպիսկոպոսաց ընտրութիւնը Մայրաքաղաքիս ժողովրդեան ինչո՞ւ կը վերաբերի .

Գ. Ընտրեալ անձինք ի՞նչ աստիճանի մարդիկ են . կ'անցնիմք պատասխանելու ձեր ամենախարդախ տեսրին երրորդ յօդուածին .





ՅՈՒՌԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ

Այլ և այլ ամբաստանութեանց ճշմարտութեանը վրայ:

Չեր տեսրին երրորդ յօդուածին մէջ, Ասենադպիր տէր, կ'աշխատիք ցրել Հասուն գերապայծառին վրայ եղած երեւելի ամբաստանութիւնները: Բայց մեզի հարցընելու ըլլայիք նէ, ձեզի բարեկամաբար խորհուրդ կուտայինք լուելու գոնէ այս մասին մէջ: Վասն զի առջի գրած այն երկու յօդուածնիդ կարելի է որ միամիտները կրնային խաբել, որովհետեւ հարիւր, կամ հարիւր յիսուն տարուան մէջ պատահածներուն հարկաւոր երեւելի գէպերը՝ կամ բոլորովին կամաւ լուեր էիք, կամ ուզածներնուդ պէս պատմեր էիք: Սակայն այս յօդուածին մէջ ձեր Մեծաւորը բոլորովին անբասիր ընելու այնպիսի բաներու ձեռք վարկեր էք, որոնք արեւին լոյսէն աւելի յայտնի են, որովհետեւ մեր օրերը եղած բաներ են, Ուստի շատ աղէկ կըլլար որ այս յօդուածին ամենեւին ձեռք չի վարնելով՝ զմեզ ալ չի պարտաւորէիք պատասխանը տալու: Թէ որ խօսիլ չէք գիտեր, լուել ալ չէիք գիտեր ո՞վ մարդիկ: Բայց որովհետեւ սկսաք դուք խօսելու, մենք ալ կը պարտաւորիմք պատասխանելու: Արդ ըստ որում բանը չերկնցընելու մտօք ամեն դիմադրութիւններնուդ զատ զատ պատասխան տալ չեմք ուղեր, ուստի պատմական եղանակաւ մը և համառօտ կերպիւ Հասուն Գերապայծառին վարքը՝ պատմենք, ուր յայտնի կը տեսնէք Արիւղիէ շոյ տեսրին ըսած ամեն ճշմարտութիւնները:

Հասուն Գերապայծառը, ինչպէս որ մեր առջի յօդուածին մէջ ըսինք, երբ այլ և այլ միջոցներով օգնիչութեան և յաջորդութեան կոնդակը առաւ եկաւ նէ կոստանդնուպօլիս, իր տէսբօ-

Թական իշխանութիւնը ըստ ամենայնի անկախ առաջ քշելու համար պէտք եղաւ ազգին ուժը կամաց կամաց կտրել, Վասնորոյ ուր որ ազգայնութեան զօրութիւն մը կամ հոգի մը կ'երեւար՝ ջանաց միշտ տկարացնել, ուր որ միութիւն մը կար՝ քակել, իշխանաց մէջ տարաձայնութիւն ձգել, և ազգակործան կողմնակցութիւնը նորէն արթնցնել, Եւ որպէս զի իր այս փառասէր խորհուրդները աւելի դիւրութեամբ առաջ տանի, հարկադրեցաւ ազգիս արտաքին իշխանութիւնն ալ ձեռք բերել, ուստի 'ի դարձին 'ի Հռոմաց՝ շտակ եկաւ նստաւ Պատրիարքարանին մէջ:

Այս ատեններս, ինչպէս որ ամենուն յայտնի է, Նախագահ Եպիսկոպոսապետն էր Մարուշեան Պօղոս Գերապայծառը որ ըստ հոգւոյ կը հովուէր զժողովուրդը: Իսկ Ազգապետ քաղաքական Պատրիարքն էր Եսայեան Գերապատիւ Հ. Կարապետ վարդապետը Միսիթարեան որ ըստ մարմնոյ կը կառավարէր զազգը: Այս երկու ալեւոր ծերունիները ձեռք ձեռքի տուած և ազգին բնաւորութեանը հմտացած խոհեմութեամբ կը կառավարէին, Բայց մե՛ղք որ այս ցանկալի խաղաղութիւնը ընդ երկար չի քըշեց, ինչու որ Հասուն Գերապայծառը Պատրիարքարանին մէջ բողոքովին Դաւիթին որդւոյն Աբիտղոմին ճամբան բռնեց. «Ազգին մէջ մարդ չի կայ, կըսէր, որ աղքատաց գործքը տեսնէ, երկու մեծ ունինք, երկուքն ալ ցնդեր են, իրենց պաշտօնները չեն կրնար նէ թո՛ղ ձգեն, քան թէ ազգին գործքերը այսպէս երեսի վրայ մնան և այլն և այլն»: Եւ միշտ Ազգապետին ծերութիւնը և անկարութիւնը առաջ քշելով, վերջապէս իր կողմնակցութեան ձեռօք ազգիս արտաքին իշխանութիւնն ալ ձեռք ձըգեց, որուն շտտնցունէ կը բաղձար: Պատրիարքական իշխանութիւնը ձեռք առաւ չառաւ առջի գործքը՝ ազգին քսան տարուան գործածած կանոնադիրքը մէկ դի դրաւ: Թի՛ է Վէբիլին և թէ Պատրիարքարանին իշխանաց ընտրութիւնը ազգին ձեռքէն առաւ, ու Նախագահին, գղերին ու ազգին հակառակ և իրեն յարմար՝ իր ուզած անձիքները դրաւ: Բնդդէմ ազգային կանոնաց դատաւորները ինքը ընտրեց, ու թէ դատաւորաց վերջին գործագիր վճիռը, և թէ աղերսագրաց հրամայելը իրեն միայն սեպհականեց, ուրով իր կամքը միայն առաջ կ'երթար. վասնորոյ և դատաստանին

սենեակն ալ շուտով գոցուեցաւ , ըստ իւր նպատակին : Երեքի բաժնուած ազգային զմուռը ճամբով մը ձեռք ձգեց , Բաց ՚ի ա սոնցմէ , ազգային կանոն կար որ մէկ կտակին վաւերութեանը համար երկու աշխարհական իշխանաց վկայութիւնը և ստորագրութիւնը հարկաւ պիտի ըլլար : Իսկ Հասուն Գերապայծառը իր օրը ամեն օրէնք և իրաւունք ձեռքը անցունելով՝ ընդդէմ արեւելեան և արեւմտեան , քաղաքական ու տեղական ազգաց և ազանց օրինաց և սահմանդրութեանց , իր ատենադպրին միայն ստորագրութեամբը կտակները կը կատարէր :

Այս ըսածներս ինչչափ ալ ամենուն յայտնի են նէ , մեր Ատենագպիրը , այս ճշմարիտ ամբաստանութեանց պատասխան մը տալու համար իւր տեսարակին երեսուն ութերորդ երեսը ասանկ կը գրէ . Հասուն Գերապայծառին ազգին կանոնները որո՞ք որո՞ք արեւելեան ամբաստանութեանը ինչչափ անկէ՞ն ըլլալը զանց կընեն , վասն զի Կաթողիկոսական Երեւոնի վերաբերեալ գործողութեանց միմտմտի ըլլալ ամենեւին չազն : Յայտնի՞ ստութիւն . վասն զի այս օրուան օրս հոգեւոր իշխանութեամբ այնչափ զեղծուած է Գերապայծառը , որ մինչեւ արտաքին իշխանութիւնը իր ձեռքը խաղաղք է եղած . ամեն բանի մէջ իր հոգեւոր իշխանութիւնը խառնելով՝ ուզածին պէս կը դարձնէ , որով ոչ ազգապետը իր ազգապետութեան պաշտօնը՝ և ոչ Երկու տասանները իրենց իշխանութիւնը կրցան գործածել երբէք . Գերապայծառին ու իր պաշտօնատէրներուն բերանը գրեթէ այս խօսքերը են միշտ . “ Բ. Գունէն ազգապետին տրուած Պետութիւն ” բողոքովն մեր հոգեւորական իշխանութեանը կը վերաբերի . Իսկ ” Ազգապետը մէկ Խափու օղակն մը պէս է և այլն : ”

Յիշեալ խարդախ տեսքը դարձեալ երեսունը վեցերորդ երեսը կը գրէ : Չէ թէ միայն ժողովրդապետներուն (այսինքն բարօքեաներուն) բորժոք չէ կրայ շինելը , այլ մանաւանդ որքէն անոնց եւ հոգաբարձուներուն արեւելեան : Իսկ կրայն բարեկեցարալ՝ Երեւոնիներուն ժամանակները է՞նչ ճամբով կը լլար նէ , նայն կերպով կը շարունակուի Հասուն Գերապայծառին օրովը . Ի՞նչ կըսէք ո՞վ մտացի մարդիկ , այս խօսքերով զո՞վ խաբել կուզէք : Հանգուցեալ Պալ օղուին խարդախ , անիրաւ ու անվաւեր կտակին պէս կտակ մը առջի Նախագահից օրովը լուսած էր , որուն զօրութեամբը տառապեալ պրի կինը և մէկ հատիկ որք աղջիկ զաւակը գը-

րեթէ ամեն հայրենի մնացած սեպհականութենէն զրկուեցաւ .
յսուեր էր արգեօք , առջի ատենները , Գամաղիէլեան մայրա-
պետին կտակին նման կտակ մը , որուն Ապրոյեան ժառանգները
աղքատութեան մէջ կը հալին ու կը մաշին . ի՞նչ կըսէք , պատ-
մե՞նք ձեզի Իիւրբձի Բերիմին կնկան սնտուկը ^{ստոպանի} գործի-
քով բացուելը , զմուխտ մատնին և այն առնուելը . Ասիկա ընո-
ղը հոգաբարձու չէ՞ր մի . Պատմե՞նք ձեզի Ասիկեան Սուլթան
տուտուին բուն ժառանգ ո՞վ ըլլալը , և յիշեալ խաթունին հո-
գին դեռ բերնէն չելած , մնացած արծաթ հայլն ու ծանր փ-
փշը իր տունը փակցունելը . Բնե՞մք դարձեալ Ռահճեանց քովը
մեռնող Բայբաքճեան մայրապետին կտակը . ի՞նչ կըսէք , տասը
տարուան մէջ եղած ամեն կտակները ու անիրաւ գործողութիւն-
ները մէկիկ մէկիկ պատմե՞նք մի . Գոհ կըլա՞ք դուք այն ատենը .
Ա՛հ , մի՛ պարտաւորէք մեզ ձեր ամեն գործողութիւնները յա-
ռաջ բերել , և այսչափս հերիք ըլլայ ձեզի . ձեզի որ , ըստ ու-
րում Ատենադպիր , դարձած ամեն բաներուն մինէ՛ աղէկ տեղ-
եակ էք , և գրիչնիդ ձեռուընիդ բռնած՝ միշտ ձեր Տիրոջը ուզա-
ծին պէս ամեն բան կը գրէք , կը կարգադրէք , ուսկից հարկաւ ձեզի
ալ երբեմն երբեմն բաժին կը հանէք . Գուք այս բաներուս պաղ
արիւնամը կը ծիծաղէք , զոր օրինակ գրերէք ձեր ստախօստեա-
րին երեսունը հինգերորդ երեսը , բայց մարդիկ կը զարհուրին
այսպիսի սուկալի գործողութեանց վրայ . Այսչափ յիշեցրնելով
ձեզի , որովհետև պարտաւորեցիք զմեզ , կը դառնամք մեր պատ-
մութեանը ընթացքին .

Երբոր Հասուն Գերապայծաւը ազգիս ամեն օրէնքները ու իրա-
ւունքները իրեն յափշտակած , տեսքօթիք կառավարութիւն մը
սկսեր էր վարելու , այն ատենները ծնաւ Համազգեաց ընկերու-
թիւնը : Այս ընկերութեան վրայ սկիզբէն մինչեւ վերջը ճշմարտ-
իտ անչէ՛ ճշ մանրամասն տեղեկութիւն գրուած և հրատարակուած
է , զոր Աթոռակալին յիշեալ տեսքը խարդախութեամբ չի յիշեր ,
և որուն առջին նոյն իսկ ճշմարտաւոր անչի ալ պատանձեցաւ . Ուստի
աւելորդ կը սեպենք այն ընկերութեան պատմութիւնը հոս երկ-
րորդել . Արդարասէր ու խոհական անձինք , խաղաղ ու հանդարտ
մտօք կարդալով յիշեալ երկու տեսրակները աղէկ կը տեսնեն ճշ-

Տարածելն խարտեական խարդախութիւնները , և ճշմարտութիւնն ճշմարտութիւնները . Մենք այսչափ կըսենք միայն ու կը հաստատենք որ թէ Մարուշեան Պողոս Արքեպիսկոպոսը , և թէ ազգին մեծամեծ իշխանները աւանձին ժողովով հաւանութիւն տուած էին այն ընկերութեան և իրենց սէրը ցուցուցած էին . Հասուն գերապայծառը միայն չի կրցաւ տանիլ ու հաւանիլ , որովհետեւ ազէկ տեսաւ ու հասկըցաւ թէ այս ընկերութեան ընթացքը՝ իր մտքին մէջ նկարած շէնքին յասակագիծը բոլորովին պիտի խանգարէր . Վասն զի հոս կը լսուէր տեսուչ , խորհրդական , խաղաղարար , գանձապետ , դրագիր , ատեան , ճիշտ ու մանրամասն հաշիւ , ազգայնութիւն , օրէնք , կանոն , իրաւունք , որոնց ձայնը իր ականջին անտանելի էր . վասն զի ինք անոնց ամենուն յիշատակը ազգայնոց մտքէն ու սրտէն բոլորովին ջնջել կը նայէր . ուստի և ընկերութեան ծնած ժամանակը խեղդել կը ջանար զայն , պատեհ առթի ու ժամանակի սպասելով միշտ : Վասնորոյ սկսաւ լրագիրները գննել քննել երբ յանկարծ աչքին երեւցաւ «Երկրայն» վրայ լրագրի մը խորհրդածութիւնները , որուն բոլորովին անտեղեակ էին և ընկերութիւնը և անդամները . մնաւանդ թէ լրագրապետը յայսինի և որոշ ծանուցած էր իր կողմանէ եղած ըլլալը այն խորհրդածութեան . Այս դէպքը ձեռքը վաթթեց Գերապայծառը , և 1847 ին . Օգոստիս մօտ , իրեն կողմնակից աշխարհականաց մէկուն տունը գիշերանց ժողովք կազմեց իր մէկ քանի քահանաներովը . հոն իրեն հաւանութեամբը աղերսագիր մը շինուեցաւ . և Աստարծեան վարդապետին հրամանաւը , որ իւր աթոռական էր այն ատեն , ժամկոչներ արձակեցան ամեն տեղ , և քահանաները բռնի իրեն բերել տուաւ նոյն աղերսագիրները ստորագրելու . Այս է ահա այն աղերսագիրը որ մեր հակառակ կողմը ընկերութեան դէմ երեսունը ինը լիարժեք ստորագրութեամբը որոշած բողոքի լուրջը ըսելով կը յիշատակէ (երես 36) :

Այսպիսի թուղթերով ահա մէկ կողմէն Հռոմայ կամբաստանէր զընկերութիւնը , և մէկալ կողմէն ըստ որում Ազգապետ՝ ամեն անարժան միջոցը ՚ի գործ կը գնէր բարձրագոյն Դրոսն առջեւ կործանելու ջնջելու զայն . Սակայն բարձրագոյն Դրոսն ձեռք չէ թէ միայն չի կրցաւ կործանել , այլ մնաւանդ

Թէ ընդունեցաւ . իսկ յետոյ Հռովմ երթալով, չեմք գիտեր ինչ մեկնութիւններ տուաւ ու ինչ վախեր ցուցուց հոն, մինչև վերջապէս համոզեց զԵրևանահայ Գարաբնալը, և ստացաւ այն հովանաւոր թուղթը, որուն մէջ յայտնի կը տեսնուի Հասուն գերապայծառին (ժողովուրդի ժողովուրդի) ըսելով յայտնած հարձիները և տուած մեկնութիւնները այն ընկերութեան դէմ, զոր քիչ մը առաջ ընդունելու և օրհներ էր : Ահա ասիկա Ատենադպիր տէր, ինչպէս դուք մեկ կողմէն քահանայից բռնի ստորագրութիւն գնել կուտաք՝ ձեռք ուղղածուդ պէս շարադրեալ թուղթերու վրայ, և մեկալ կողմէն Հռոմայ պաշտօնատեսարց ծուռ կարծիքներ կը յայտնէք, սխալ մեկնութիւններ կուտաք, նամակներ կը բերէք, ու վերջոյ կը դառնաք կրակէր ժողովրդեան . « եկեղեցականք բողոքներ » ըրին Հասուն Գերապայծառին . Սուրբ Գահը քննելով փաստաւոր կարգաւ ընկերութիւնը, Հասուն Գերապայծառը ի՞նչ ընէ, « ասոնց դէմ կրնայ կենալ ևն, ևն » : Սակայն այս նենգաւոր միջոցներով քանի մը տխմարները միայն կրնաք խափել, մեկք չենք խախուիր . իսկ օտար ազգերը բուճ տեղ Հռոմայ վրայ կը գայթակղին, և բոլոր ասոնց պատճառը դուք էք միայն : Մի վ չկտէ այս օրուան օրս որ ուսումնական ընկերութիւն մը պարզ քաղաքական խնդիր մըն է, Տիրութեան միայն վերաբերեալ : Սեռադք, արուեստք, բնական պատմութիւն, հնագիտութիւն, վաճառականութիւն, երկրագործութիւն, բոլոր ասոնք ի՞նչ վերաբերութիւն ունին Աստուածաբանութեան հետ : Եւ ի՞նչ յարգ ի՞նչ պատիւ կը վայելէ այն մարդուն որ զասոնք կարգիլէ իւր ազգին : Այո՛, այո՛, ըստ ճշմարտիս տեսրին հարկաւ կուգայ կը հասնի, դեռ եւս մտէ այն ժամանակը, ուր սուրբ Դողովքն ալ ստուգութեամբ կը տեղեկանայ բանին ու կը հասկընայ ձեր ինչպէս մարդիկ ըլլալը :

Հասուն Գերապայծառին այս գործողութիւնները ժողովրդեան աչքը բանալով հասկըցան ամեն մարդ ինչ վտանգի մէջ գտնուելը ազգին . ուստի միաբան ոտք ելած երկոտասանից ժողով մը ունենալու կը ջանային : Գերապայծառը երկար ժամանակ նոյն ժողովին հաստատութեանը արգելք մը եղաւ . բայց ժողովուրդը վեհախառ կայսեր ղեկավարով ստացաւ վերջապէս իւր փափագը, և հաստատեց երկոտասանից ժողովը, որոնք ձեռնամուխ

եզան ազգիս օրհնքը ու կանոնները քննելով կրկին հաստատելու : Այն ատեն զարմանալով իմացաւ ազգք որ իրեն շինած եկեղեցիներուն և ազգային բոլոր սեպհականութեանց տէրը ինքք չէ եղեր հապա հասուն Գերապոյծաւոր միայն :

Ըստ կանոնաց ազգիս , Եկեղեցականները ազգէն կ'ընտրուէին , որոնք տարուէ տարի ելեւմուտքը ազգին կը ցուցնէին : Սահայն Սայր եկեղեցին՝ ուր ոսկին առատութեամբ կը վազէր , այս կանոնէս զարտուղեցաւ Գերապոյծաւորն օրը . այսչափ տաւ ըիէ 'ի վեր ազգք ամենեւին անոր հաշիւը տեսած չէր , վասն զի Նախագահը իրեն միայն սեպհականած էր անոր հաշիւը տեսնելու և եկեղեցականները ընտրելու : Սայր եկեղեցին այսպէս կարգադրելէն վերջը Գերապոյծաւոր , աղքատաց սնտուկներուն կառավարութիւնն ալ իր ձեռքը անցընել ուզեց , և ասոր համար կերպ կերպ հնարքներ 'ի գործ դնելով երբոր չի կրցաւ նէ գըլուէխ ասնիլ , քիչ մնաց Առաքելական քննիչ Մ . Ֆէրրիէրիին ձեռօք ան ալ յախշաակէր պիտի , թէ որ ազգէն ընտրուած աղքատանոցի իշխաններէն զվաւորները անհաւատարիմ գըտնուէին : Սահայն ազգիս հաւատարիմ նոյն անձիւքը յետոյ Գ . Սէլվիեանին ձեռօք իրենց հաւատարմութեանը վրէժը տուծեցին անարգ ճամբով մը , իրենց քսան ու երեսուն տարուան ազգիս ըրած մեծամեծ ծառայութեանցը փոխարէն . և վերջապէս Հասուն գերապոյծաւորն կողմնակից մարդոցը միայն ձեռքը մնաց աղքատաց սնտուկն ալ :

Այսպէս ուր եկամուտ մը կար նէ ազգիս կառավարութեանն հանելու և իւր իշխանութեանը տակ խօթել ուզելուն համար , ամեն ուժովը ընդդիմացաւ այս մասին կանոնաց հաստատութեանը , և նենգաւոր կերպերով կանոններն ալ խափանեց , ժողովքն ալ ցրուեցաւ այն ատեն , և հինգ տարի վերջը երբ Գ . Կակոն վարդապետին օրը դարձեալ գումարեցաւ այն ժողովը՝ հաստատելու նոյն կանոնները , նոյնպէս դարձեալ հաւատակեցաւ Գերապոյծաւոր : Վասն որոյ ներկայ տարւոյս յունվար 15ին Սեֆուրիէն մեջ եկան գումարեցան , Մշեցի Գ . Սէլվիեան , Գաղատացի Առաքելեան իւր տեղապահը , Բոքընիկցի Պօրճունեան իր Աթոռակալը , վերջապէս իզմիրցին , Իէօթահեա-

ցին , կիւրիւնցին , Հասան զայէցին և այլն և այլն . բոլոր այս
խորհրդական վարդապետները կրսեմք միանալով որոշեցին վճուե-
ցին մէջերնին կրկին անգամ ջնջելու ազգային կանոնները , և
Ազգապետ Գ. Նիկողայոս վարդապետն ալ հոն կանչեցին ու յոխոր-
տալով սպառնացան որ « կանոնագրին մէջէն բոլորովին ջնջել տայ
»ան երկու կանոնները , այսինքն կտակաց կատարուելը և եկեղեց-
»եաց , աղքատանոցին , հիւանդանոցին ելեւմուտքը և եկեղեց-
»պաններուն ընարութիւնը . վասն զի չէ թէ ազգին՝ այլ մեր հո-
»գեւոր իշխանութեանը միայն կը վերաբերին » կրսեին : Ուս-
տի Պատրիարքը ետ քաշուեցաւ , և կրկին անգամ ժողովքն ալ
ցրուեցաւ , կանոններն ալ երեսի վրայ մնացին 'ի վնաս համո-
րէն ազգին , Ասոնք , Ատենադպիր տէր , ազգիս կանոնները ջնջել
չէ՞ մի : Ասոնք եկեղեցական իշխանութենէ դուրս արտաքին
գործոց միջամուխ ըլլալ չէ՞ մի : Ի՞նչպէս ուրեմն կը յանդրգ-
նիք ըսելու ձեր ստութեան տետրին մէջ թէ Հասան փերայայծառը
կերե- եղիսոպոս , արտաին գործերու միջամուխ ըլլալ չէր : Ի՞նչ համար
ձախութեամբ կ'ուրանաք դուք բոլոր այս գործերը , որոնք ա-
մենուն աչքին առջեւը կատարեցան , և որոնց վկայ է Արկուսա-
սանից հետ մեկ տեղ համօրէն ազգը , Ամբողջ հինգ տարի է
ահա որ ազգը կը պնդէ իւր այս ազգային իրաւունքները . իսկ
Հասուն գերապայծառը և իւր կողմնակցութիւնը կը հակառա-
կին միշտ իբրև իրենց սեպհականեալ իրաւունք . և այս հակա-
ռակութիւնը այս օրուան օրս ազգը երկու հազար քսակէն աւե-
լի պարտքի տակ ձգեց . « Այս բուն և ճիշդ իրաց որպիսու-
»թիւնը յայտնի ըլլալով » (Ատենադպիր վարդապետին տետրին
խօսքերն են ասոնք) կը զարմանամք ի՞նչպէս մեր Ատենադպիրը
կը համարձակի ծանծաղամտութեամբ այսպիսի սուս մը զրու-
ցելու : Երկուսն եղած պարթարտունն պարտքը Հասուն փերայայծառին ծա-
մանակն ետքը եղած է կրսէ : Սակայն պատճառը չի զրուցեր , վասն զի
ըսելու ըլլայ նէ բոլոր այս պարտքերուս պարտականութիւնը Գե-
րապայծառին վրայ կիսնայ : Նմանապէս եկեղեցեաց հաշիւներ
ուրեւ համար այսպէս կը գրէ . Եկեղեցեաց հաշիւը ոչ երբէք Հասուն
փերայայծառին յետին է , այլ հասարակի՝ եւ բոլոր ազգին հասնած աշխարհական ան-
յանց յետին է . (երես 30) : Բոլոր ազգը ըսելով զո՞վ արդեօք կ'իմանայ

Մտենադպիրը չեմք գիտեր . սակայն այնպէս չէ : Մայր եկեղեցին
Հասուն գերապայծառին ձեռքն է որ ուզածին պէս կը դնէ կը
վերցընէ . կտակները իրեն ձեռքն են : Մտնցմէ 'ի զատ եղբայ-
րութիւնները իրեն ձեռքն են . եօթը խոյրիք իրեն ձեռքն է .
անոն Մարիամ իրեն ձեռքն է . Դիօնին ընկերութենէն ազ-
գին համար եկած այսչափ տարիէն 'ի վեր սաչափ հազարաւոր
ղուրուշները իրեն ձեռքն են . Սամաթիոյ եկեղեցւոյն շինու-
թեանը համար ժողուած այնչափ ստակները իրեն ձեռքն են . իսկ
ազգին պարգեւեալ այնչափ տուները , խանութները , անթափան-
ցելի գաղանիքներ են դեռ . Վերջապէս ազգին ընդհանուր գանձ-
ապեան է . կը թողումք ուրիշ մանրամասն հաշիւները : Սա-
կայն ազգը կամ եղբայրութիւնները իրաւունք չունին՝ն արդեօք
գոնէ տարին մէկ անգամ մը տեսնելու , քննելու և իմանալու
եղած հաշիւը և ելեմուտքը : Եւ որովհետեւ բոլոր այդ հաշիւ-
ները անթափանձելի քողքով մը ծածկուած են միշտ , ուստի և
ժողովուրդն ալ ամեն կերպ կասկածներ ընելու երկիրքէն մինչև
գետին իրաւունք ունի : Մյա թէ ոչ կանչեցէք , ցուցուցէք
տեղնի տեղը , մանրամասնաբար այն հաշիւները բոլոր ազգին թէ
որ կրնաք :

Բայց թերեւս մէկը ըսէ . այս ստակներս բարեպաշտական վախ-
ճանաւ ժողովուրդով , Եպիսկոպոսին միայն կ'իյնայ վայելել , որպէս
զի իրեն յարատեւ ճամբորդութիւններուն , տուած պարգեւներ
րուն , իր նպատակին հասնելու համար ըրած ամեն ծախքերուն ու
կանգնած ձեռքերուն բաւական ըլլայ : Երանի՛ թէ ասոնց ամենը
ազգիս պայծառութեանը ու շինութեանը համար ըլլային : Երանի՛
թէ այն մեծ շէնքերը ազգիս օգտակար որդիք պարգեւէին : Սա-
կայն դժբաղդաբար բոլորովին հակառակը ըլլալով , շատ աղէկ էր
որ այսպիսի դպրոցներ բնաւ ծնած չըլլային : Վասն զի այն դպրոց-
ներուն վարպետները ու վարպետահիները անգամ բուն օտար
հոգւով մը շարուած ու զանգուած՝ և Հասուն գերապայծա-
ռին ազգակիրժան նպատակացը յարմար անձինք ըլլալով , ասոնց-
մէ ելած ինչ Բանաստեղծացաւ և ինչ աշխարհական որդուք ինչպէս օբարտար ուս-
մանով , գերաւիճաններով , հոնոր եկեղեցականներ ու առաքինի զաւակներ հասար-
կանիւնը որոնումով ուրախանայ պէտի : Մտնցմէ քանի մի հատ չի ցուցը :

նէք մեզի որ կարենանք ճաննալ և մենք, Երբոր երկու հարիւր
աղջկուռնք՝ կարգ մը լեզուակորոյս «նկնեւոր» ձեռքին տակ բուն
իրենց մայրենի լեզուին կորսընցընելու ըլլան նէ, ասանկ դպրոց-
ները դուրս թեա՞ն արդեօք, չէ՞նէ պարսակի արժանի են. Հաս ա-
ղէկ չէ՞ր արդեօք, որ ասանկ ազգակործան դպրոցներ ամենեւին
ծնած չըլլային, որ քիչ ատենէն անշուշտ գու՛նդ մը այլանդակ, ու
տգէտ չանկեցի, «անկեօ» հրէշներ պիտի ծնանին. Այսպիսի շէնքերու
դպրոցի անուն տարը անգամ արժանի չեմք համարիր. Միթէ գաղ-
ղիացի Քորերը ասոնց աչքին առջեւ բարի օրինակ մը չե՞ն ըլլար,
որոնք գիշեր ցորեկ կ'աշխատին Հայոց, Յունաց, և Հրէից ան-
գամ բուն իրենց մայրենի լեզուն սորվեցընել նախ, և չէ թէ մին-
չեւ ասոնց մայրենի լեզուն մոռցընել տալ: Բայց որովհետեւ Հա-
սուն. Գերասպայծառին բոլոր ջանքը՝ ամենուն մտքէն ու սրտէն
ազգային ոգին շնջել է, ուստի պէտք է իրեն այս ճամբան բռնել:

Սակայն եկո՛ւ նայէ որ՝ այս ճշմարիտ ամբաստանութիւնը իսկստ
ծանր գալով պատուելի Ատենադպրին, ասոր վրայ այսպէս կը գը-
րէ (երես 31): Հասուն Գերասպայծառին ո՞ր գործը որդեօ ազգային ծէսերը,
արարող-վիճակները եւ կանոնները (որ է ազգայնութիւնը) «բեւ-
նշուէ: Սենդ անկեան անոր այրողիս գործը չը որսան: Արդարեւ աչք չունենա-
լու է մարդ որ չի կարենայ տեսնել այսչափ յայտնի բաները, սա-
կայն քիչ մը համբերեցէք ու ձեռքովնիդ կը շօշալիէք: Բնէք մե-
զի, Ատենադպիր տէր, Մայրաքաղաքիս մէջ ձեր կողմնակից աշխար-
հականներէն կրնա՞ք ցուցընել մեզի տասը հոգի, տասը հոգի մի-
այն՝ աւելի չեմք ուզեր, որ աղէկ տեղեակ ըլլան իրենց մայրենի
լեզուին ու պատմութեանցը, ցուցուցէք անուանեցէք մեզի զանոնք
թէ որ կրնաք: Իսկ մենք ընդհակառակն կը ցուցընեմք ձեզի ա-
ռատութեամբ, այնպիսի անձինք որ չէ թէ միայն իրենց լեզուն
չեն գիտեր, այլ հայութիւնը անգամ ուրանալով՝ չեմք գիտեր
ինչ ազգ կուզեն ձեւանալ: Կը թողումք այն գաւառները որոնք
ձեր հոգաբարձութեամբը չեն յիշեր անգամ ոչ իրենց ազգու-
թիւնը և ոչ իրենց լեզուն: Ասոնք ազգութեան հոգին աւրել
խանգարել չե՞ն մի: Բայց յառաջ երթամք, Դարձեալ ըսէք մե-
զի, ինչո՞ւ համար հայադէտ ու ազգասէր եկեղեցականք կը հա-
լածուին, պաշտօններէ կը զրկուին, խորհուրդներէ կը մեր-

ժողովն , և անոնց տեղ օտարասէր , ազգատեաց , հայութեան
խանգարիչ եկեղեցականաց ձեռք կ'անցնի ամեն բան . ի՞նչ վախ
ճանաւ արդեօք այս օրուան օրս ամեն եկեղեցիներու մէջ Աստու
ուածային ժամասացութիւնները գրեթէ լռեցին , ու առջի Նախա
գահից ատենուան եկեղեցեաց պայծառութիւնը խաւարեցաւ .
Ահաւասիկ Յիսուս փրկիչ մայր եկեղեցին խառնուրդիցի լուր քա
հանայի մը , ու խեղճ տիրացուի մը ձեռքը միայն մնացեր է . ինչ
չո՞ւ , այն պանծալի ժամերգութեանց յաջորդեցին տաճկերէն ա
ղօթքները , եօթը վիրաց , մայիսին , անուէն Մարիամու և այլն և
այլն . ի՞նչ պատճառաւ հայերէն քարոզները բոլորովին դադրե
ցան , հայերէն քարոզել ու զողներն ալ արգելուեցան . յուսա
ւորչայ տօնը անգամ քարոզէ՝ և ամեն հանդէսներէ զրկուելու բա
կաւ : Ատնք , Ատենադպիր տէր , արարողութիւնները , ծէսե
րը կամաց կամաց խանգարել ու ջնջել չե՞ն մի : Այսպէ՞ս է՝ Հա
տան Գերապայծառն զմե՛ս ու յարտետախիւնը , որպէս զի աղբայն ծէսերը եւ
արարողութիւնն պահուին :

Հասկըցուցէք մեզի . ի՞նչ պէտք ունէր «եկեղեցւոյս արարողա
» լիւնները պարտաճանաչելու խորհի կանոնի դնելու համար այնպիսի անձինք
» ներէ բաղկացեալ ժողովք մը » . ի՞նչ համարձակութիւն , այն
չափ Ս . Բահանայապետներէն ընդունուած և հաստատուած , գո
վութեամբ յիշատակուած արարողութիւնները նորէն բննել ու
համայնեցնել , բայց ի՞նչ բանի . չեմք գիտեր ինչ կերպ ժողովք
է այն , որուն մեծագոյն մասը չէ թէ հմուտ՝ այլ բոլորովին
անտեղեակ է և թշնամի այն պանծալի ծէսերուն , և իրենց անու
նը անգամ ուղիղ ստորագրելու անկարող . Բաւական է յիշել
միայն որ դուք անոր ատենադպիրը՝ ձեր Տիրոջը միայն ու
զածը կը նշանէք յանուն այն ժողովոյն : ի՞նչ կրէք , ո՞ր ազգա
կիցք , այս պատկառելի ժողովոյն համարձակութեանը որ սբբոց
թարգմանչաց , Ներսէսեանց , Գրիգորեանց և բոլոր Աստուած
արեալ Հայրապետաց ուղիղ կարգադրութեանցը ձեռք զարնել
կը յանդգնի : Այսպիսի գործողութիւնները որպիսի՞ հօգի է ,
ի՞նչ նպատակէ առաջ կուգան :

Ելլաւ է , մենք ալ ձեզի հետ մեկ տեղ կը յիշեմք , Աթու
ռակալ տէր , Հասուն գերապայծառին եկեղեցւոյն արմատախիւններու

— հանդիմանք — ներկայ գտնուելը , բայց գիտե՞ք որոնց : Ասոնց որ առատ եղբայրութիւններու հետ կապակցութիւն ունին , զասոնք ամենքն ալ կը յիշեն : Ասոնց հետ մէկ տեղ կը յիշեն նաեւ այն խայտառակ գիշերային եպիսկոպոսաց մշտնադէմ ձեռնադրութիւնները : Բայց տասը տարուան մէջ ամենեկին չի յիշեր մէկը , ու բնաւ չի տեսներ անգամ մը ամբողջ Աստուածային ժամերգութեանց առաջիկայ գտնուելը Գերապայծառին , ինչպէս որ առաջին երկու առաքինի Նախագահները կը կատարէին :

Հասուն գերապայծառը՝ այսչափ յայտնի ազգային իրաւանց , կանտնաց , օրինաց , ազգայնութեան և արարողութեանց հակառակող ըլլալով , տես մեր պատուելի Աստուածային իր ստախոս տեարին երեսունեւերկու երրորդ երեսը ի՛նչ կը գրէ : « Կրնանք » յիշել նաեւ քանի մը սարի առաջ Հասուն գերապայծառին կը «րած քրանջան աշխատանքը , որով և Հոռոմ երթալով ամեն » ձիգն ու ջանքը գործքի դրաւ , որպէս զի ազգային իրենց արարողութեան երկու լի խողան , ազգայնութենէ չի կարենան երաշարի եւ չի լարենան » և ասոր գործադրութեանը համար պատշաճ եղած սուրբ Գահին հրամանագիրներն ալ ձեռք բերաւ և պահպանութեանը միշտ « հոգ տարաւ » :

Ի՞նչ կըսէք , ի՞նչ կը գրէք ո՛վ խելացի մարդիկք : Կը հասկընա՞ք արդեօք ի՛նչ է զրուցածնիդ : Անանկ է նէ Հասուն գերապայծառը Հոռոմ երթալէն առաջ՝ սուրբ Գահը կուզէ կամ կը ջանայ եղեր որ մեր ազգը իրեն մայրենի արարողութեան երկու լի , ազգայնութենէ երաշարի ու լարենանց : Անանկ է նէ սուրբ Գահը կուզէ եղեր բոլոր Արեւելեան ազգաց սրբոց Առաքելոց և Հայրապետաց Աթոռները կործանել , և սրբոց Հարց ու ազգային ժողովքով հաստատուած Աստուածային պաշտամունքները , ծէսները , արարողութիւնները ջնջել անյայտ ընել , և բոլորովն լատինացնել : Անանկ է նէ պարապ բան մըն է եղեր Ս . Քա հանայապետներուն բոլոր կոնդակները : Անանկ է նէ զմեզ ու բոլոր արեւելեան ազգերը խաբելու համար գրուած են եղեր Ս . Քա . Բենեդիկտոս և Թ . Պիոս Ս . Քահանայապետներուն շքուղբերականները , որոնց մէջ յայտնի կը հրամայեն ամեն արեւելեան ազգաց իրենց ծէսները , արարողութիւնները , Աստուած

Ծային պաշտամունքները ամբողջ ու անխորտիս պահել, որոնցմով ազգայնութիւննին ալ չի կարոնցունեն : Ապա թէ ոչ ան հրամանա-
գիրները նորէն առնելու ի՞նչ հարկաւորութիւն կար : Ի՞նչպէս ,
Ատենադպիր ատեր , ի՞նչ պիտի պատասխանէք :

Իսպայ չէ , բնաւ այնպէս չէ : Սուրբ Աթոռը ձեզմէ խիստ շատ
աւելի նախանձախնդիր է արեւելեան ազգաց արարողութիւններ-
ուուն ու ծէսերուն : Դուք միայն , ու ձեզի նման ծի-ծ լատին-
ներն են որ իրենց փառասիրութեանը համար ամեն բան կը զո-
հեն և յանուն Հռոմեյ կը գործեն , որով բոլոր Արեւելքի մէջ
սուրբ Աթոռին յարգն ու պատիւը խանգարելու պատճառ կըլան :

Սակայն , շատան քերտայծառը շատ երկարով ամեն ճիճն ու ջանք գործ-
քի դրաւ ըսածնիդ գիտէք ինչ է : Որպէս զի ազգայնութեան ու
արարողութեանց պաշտպան կեցող կրօնաւորաց դասը բիւր զեր-
պարտութեամբ բոլորովին ջնջէ վերջնէ : Վասն զի ազգային կա-
նոնները և իշխանութիւնները տկարացրնելէն վերջը , պէտք էր
կրօնաւորաց դասն ալ անյայտ ընել , ասոնց դպրոցներն ալ յա-
փըշտակել : Ահաւասիկ և Բարսեղից գրուելուն միմիայն պատճառը ,
որպէս զի կրօնաւորաց առաքելութիւնը դադրի , և բոլոր ժողո-
վուրդը իր ձեռքը անցրնելով ուղածին պէս կառավարէ : Այս ը-
սածնիս որչափ ստոյգ է նէ , այնչափ դուք , Ատենադպիր ատեր ,
զանոնք ծածկել ուղելով ծիծաղելի համարձակութեամբ մը այսպէս
կը գրէք ձեր խեղճ տեսարին քառասներորդ երեսը : « Ատենադպիր շայոց
տեսարին ըսած խօսքերը՝ իբր թէ Հասուն գերապայծառը , և
» իւր մտերիմները կը ջանան Սիսիթարեանց վանքը կործանելու ,
» կրօնաւարները ջնջելու , և այլ ասոնց նման թշնամեկան ամբաս-
» տանութիւնները որչափ անհիմն ըլլալը որքէն ամենո՞ր յայտնէ ըլլա-
» լուն համար , և ոչ պատասխանելոյ արժանի կը սեպնէք զանոնք :
» Վասն զի աղէկ գիտենք ասոնք Հասուն գերապայծառին , և
» իրեն մտերիմներուն խօսին եւ դերասարտութեանը դէ՞ գանգաւաներ ըլ-
» լալը » : Եղջերաւո՞ր ստութիւն :

Ի՞նչպէս չամէջաք այս հատուածը արձակ համարձակ , պաղ
արեւնով մը գրելու : Ասանկ գրելու և հրատարակելու համար
գիտէք ինչ երես պէտք է : Հապա Հասուն Գերապայծառին
այդչափ ճիճն ու ջանք ու յետ քերտ իրամ հրամանգիրները ի՞նչ բանի համար

էին : Ինչո՞ւ իւր Մեծաւորին հրամանաւը եկող կրօնաւորաց՝ նախ եկեղեցական օրինաց հակառակ՝ Պատարագը կարգիլէ Գերապայծառը , և յետոյ ընդդէմ քաղաքական օրինաց հազուսար փոխելու հրաման չի տար , ու օր և ժամանակ կը կտրէ շուտով ետ դառնալու՝ թէ և հիւանդութեան համար ալ ըլլայ անոր գալուստը : Չէինք գիտեր որ Օսմանեան պետութեան մէջ Օգոստափառ կայսրէն ուրիշ թագաւոր մ'ալ կայ իր հպատակներուն վրայ իշխող , հրամայող ու պատուհասող : Ինչո՞ւ Նախագահ Հայր Սուրբը ժողովրդեան մէկ ծանուցագիր մը չընէր , երբ ձեր կողմնակցութիւնը առանց ամօթոյ և առանց խղճի վանականներուն հերետիկոս կը կանչեն , ու ձեր դիւանաբուրժու տեսուրը բոլորովին կը լռէ այս մասին : Ինչո՞ւ վանքցիի որդի մը ձեռքէ գալու ըլլայ նէ ընդհանրական խոստովանանքի կը քաշէք զայն , իբրև թէ նորէն ուղիղ ուղիղ հաւատքի մը կը դարձնէք : Ասոնք վանականներուն անունը աւելու ու վանքերնին կործանել չէ՞ մի : Ի՞նչ կրսէք , այս մասին ամեն բան մէկիկ մէկիկ պատմե՞նք մի : Բնէք մեզի , ի՞նչ բանի համար էր , կամ ի՞նչ յանցանքի տէր էր արդեօք Սինասեան Հայր Պետրոս առաքինի վարդապետը , որ մինչև իբր խռովիչ և կասկածաւոր տերութեան մատնելով , և կերպ կերպ անլուր վրպարտութեամբ սուրբ Աթոռին ամբաստանելով , հոգւով չափ աշխատեցաք Գրապիլոնէն անարգական ճամբով մը հանել տալու : Ի՞նչ էր կրսեմք , ասոր յանցանքը , ցուցուցէք մեզի , ո՞ր անխիղճ մարդիկք : Արդեօք հանգուցեալ Մարուշ գերապայծառին հրամանաւը Գրապիլոն գացեր՝ ու արիւն քրտինք թափելով դպրոց բացեր և աղքատ աղաքները հոն ժողված կրթելուն համար էր մի : Դարձեալ ըսէք մեզի , այն չորս կրօնաւոր քահանայից յանցանքը ի՞նչ էր , որոնք իրենց հայրենիքէն , տունէն տեղէն , հօրմէն , մօրմէն , եղբայրներնէն , աղգականներնէն , որդիներնէն , բռնի բաժնուելով քարտել տուիք : Ի՞նչ էր ասոնց յանցանքը կրսեմք , յայտնեցէք մեզի , ո՞ր խռովարար մարդիկք : Արդեօք իրենց խոհեմ ու կիրթ վարքովը ձեր մօլի ու բիրտ ընթացքնիդ խայտառակելուն համար էր : Իսկ դուք , ի՞նչ անօրէն ու անիրաւ զրպարտութեամբ կը յանդգնիք ըսելու՝ իբր թէ սուրբ Գահին դէմ զազգը գրգռելու պատճառ ըլլան

ասոնք, երբ գաւառահան եպիսկոպոսաց ընտրութեան ժամանակը ազգը իւր իրաւունքը կը սնդէր : Անոնք հոս չեն հիմնյ, ո՞վ է ուրեմն զազգը գրգռողը : Ահ, ուր սր ըլլան անոնք, մի կարծէք ո՞ ազգաստեաց մարդիկք, որ ազգը կոյր զիւրայն ձեր ձեռքը խազակք ու կողպուլա մը պիտի ըլլայ երբէք : Բոլոր սոս ըսածնիս Հոռոն գերադասութիւն կանին ու դիտարարութեանը դէմ բանբարներ են այնպէս չէ՞ : Բայց մենք ինչո՞ւ ասանկ պզտի, ջնջն բաներ պատմելու կաշխատիմք . քիչ մը առաջ երթամք, հոն սարսափելի բաներ պիտի տեսնեմք :

Միթարեաններէն սկսեալ մէկիկ մէկիկ վանականաց դասը ջնջելով իրենց անունը և յիշատակը անգամ աշխարհէս անյայտ ընելու համար տես ի՞նչ գործի մը ձեռնամուխ կըլլայ Գերաւ պոյծառը :

Առաւօտ մը յանկարծ պատրաստութիւններ կը տեսնէ Հասուն Գերապոյծառը և իսկոյն Հոռոմ կը դիմէ : Հոն՝ չեմք գիտեր ինչ կերպով աշխարհորդութեան մէջ կը մննէ, հարիւր յիսուն տարուան պահուած թուղթերը կը ժողուէ կառնէ կուգայ հոս . իր հաւատարիմ ճորտներով, երգումի տակ՝ չարածողով մը կը կազմէ, ու բոլոր թուղթերը անոնց ձեռքը կը յանձնէ : Տոն Գասպարո Վուչին ըստին քահանան ստակով վարձքի կը բռնեն . Աբրահոսեան Տոն Պողոսը՝ ամեն աւտու ձեռքը Ատուածային մարմինը շջախած, շոթունքները արեամբ ներկած, սիրտը հրեշտակային կերակուրը ճաշակած՝ շոթայն մեկիկ մը պէս հոգին բերանը, լեզուն դուրս ինկած, շողիքները վազելով, թուղթերը, գիրքերը շաղկած՝ իր տունէն Սեփակիւն, անկից Ս . Հոգւոյն եկեղեցին կը վազվառէ, իբր Ատուածոյ հաճոյ պաշտօն մը մատուցանելու համար . Այսպէս կը յարատեւէ ամբողջ եօթը ամիս . վերջապէս տեսրակ մը կը գրբեն կը լմնցնեն, մէկզմէկու ձայն կուտան, մեծ է ամենուն ուրախութիւնը : Ուստի Տոն Ալարեանը տպարանէ տպարան կը դիմէ Տոն Հօլասը տպագրութեան հաշիւները ընելու համար, (կերեւի թէ մէկ մէկու հաւատարմութիւն չունին) ալ ձեռք ըստին անիմանալի հաշիւներուն մէջ կընկղմի, վերջապէս ամենաժածուկ միջոցներով Դաւաթոյ Գրօմէլիային տպարանը կը սպառի տեսրակը, ու վրան Դիպրիսօ կը դրուի . ի՞նչ յազթութիւն :

Այս սանդարմետէն բղիւած չարամատեանը ոսկեզօծ փառաւոր
կը կաղմուի , ու առաջին գլխաւոր հեղինակը ըլլող Հասուն գե-
րապարծառին հատմը կընծայուի : Իսկ Նախագահ Հայր Սուրբը
կըզմայլի ու կապչի , և սրտին սասաիկ ուրախութիւնը յայտնելու
համար՝ Պիոս Թ . Ս . Յահանայպետէն ընդունած ուկի մեծ միւ-
տալը Տօն Գասպարօին կընծայէ պրօք ըսելով ու ճակատը համ-
բուրելով : Եւ ինքը իսկոյն Անատօլու ճամբորդութիւն կընէ ,
երկրորդ օրը չարամատեանն ալ կը տարածուի :

Կառնէ ամեն մարդ այն պիղծ գիրքը , կը բանայ կը կարդայ .
ի՛նչ կընայիս . անիրաւ դատաւորը անօրէնութեան աթոռին վը-
րայ նստած , իր չար արբանեակները չորս գին բողբուած , չըր-
թունքներուն մէկը երկրիս վրայ՝ մէկալը մինչև երկինք հասու-
ցած , ու չար լեզուներն հարիւր յիսուն տարուան Սիբեանու-
թեան մը վրայ տարածած , Աստուծոյ ու Եկեղեցւոյն իշխանու-
թիւնը յախշահած , և այս կերպով Սուրբ Գահէն հաստա-
ուող իր եղբայրակից Արհիեպիսկոպոսները , Մբբահայրները ,
Վարդապետները մեռելակոչութեամբ ոսկերներն գերեզմանէն
գուրս հանած , իտաւերէն լեզուաւ երկու հարիւր միլիոն մարդ-
կանց առջև ամեն կերպ ստութեամբ հաւատքնին , օրէնքնին ,
համբաւ ու պատիւնին ծաղր ու ծանակ ընելէն վերջը , կենդա-
նի ըլլողներն ալ Տաճարականներուն պէս այրել մրկել ու աշխար-
հիս վրայէն յիշատակին անգամ անյայտ ընելու համար Վանքին
քարը քարի վրայ չի թողուլ կ'առաջարկէ : Այն Վանքը , զոր բու-
լոր Եւրոպա կը գոյլէ , թագաւորները կը յարգեն , () գոստա-
փառ Սուլթան Ապաիւլ Սէճիա կայսրը չքնաղ կենդանագրովը
կը պատուէ : Այսպիսի շէնք մը հիմնայատակ կործանալու յան-
դրգներ ելեր են () ծեալ Աստուծոյ Նախագահ Եպիսկոպոսապետ
մը , և իր մտերմ բանի մը Աստուծոյ բարձրելոյ պաշտօնեայ վար-
դապետները . . . : Ասոնց ամենը ընել և յետոյ ելել ըսել թէ ,
ՂԱԻՄԱՐԵԻՆԻՆԵՐԸ ԵՎ ՂԱՄԱԻՄԻՆԵՐԸ ԸՆԶԵԼ ՀԱՍՏԱՆ ԳԵՐԱՊԵՅԺՄԱՆՆ ԵՎ ՄԻԵՐԹԵՆ-
ՐՈՆ ԿՈՒՅԻՆ ԵՎ ԴԵՐՄԱՆՈՐԱՄԻՆԻՆԵՐ ԴԵՄ ԳՐԱԳՐՈՒՆԵՐՆԻ : Օղբմանալի՛ երես :

Ասոնցմէ ՚ի վատ ազգին պարծանք ու բարերար ազնուատոհմ
գերդաստանի մը և ուրիշ ընտանեաց , և ուսումնական երիտա-
սարդաց հաւատքնին օրէնքնին , համբաւնին պատիւնին աշխար-

հիս բաւքասելով՝ անխղճաբար տէրութեան ալ մասնել իբրեւ հայրենի թագաւորութիւնը ձեռք ձգելու աշխատողք։ Ո՛հ, անխիղճ զրպարտիչք, տակաւին Սուրբ Սեղանին ալ կը մօտենաք, դեռ ահեղ խորհուրդին ալ կը մատչիք, հանգիստ սրտիւ ու պաղ արիւնով մը։ Ասոնց ամենն ալ ընել, ու վերջը ելլել ըսել թէ ասոնք Հասան Գերապոյցածաին դէմ զրպարտութիւններ են։ Արդարեւ չեմք գիտեր ի՞նչ անուն տալու է այսպիսի մարդկանց։ Ասոնց ամենը սուտ զրպարտութիւններ են, այնպէս չէ՞։ Ի՞նչ է է ուրեմն Գերապոյցածաին անունովը վաւերացած այն աղերսագիրները որ մատուցիք դուք ձեր կողմնակցաց ձեռքը առ Վեհափառ Կայսրն, որոնց ճիշտ օրինակը ամենուն ձեռքին մէջ է և սուկալով մը կը կարգայ ամեն մարդ, և ի՞նչ ուրիշ բան կը պարունակեն այն աղերսագիրները, բայց եթէ իտպելէն ձեր պիղծ գրքին կատարեալ իմաստը։ Այլ կը յանդգնիք դեռ ըսելու թէ յեր Մեծասուրբ մարդ չի մտնէր որեւո՞նեան։ Ի՞նչպէս շուտով մոռցաք յիշեալ հրատարակուած ձեր աղերսագիրները, ի՞նչ շուտով մոռցաք աւանդատանց պատահարին պատճառաւ՝ յականէ յանուանէ այնպիսի մարդիկ մասնելիկ որոնք և ոչ աւանդատուն մտած են ամիսներով, վասն զի Պատարագը չէ թէ աւանդատանց, այլ բուն տաճարին մէջ կը տեսնեն անոնք, ո՛ր խելացի փաստաբանք։ Վերջպէս ի՞նչ շուտով մոռցաք Հ. Պետրոս վարդապետին և Համադգեաց ընկերութեան դէմ այն նենգաւոր մատնութիւնները։ Ասոնց ամենը ժողովրդեան սրտին մէջ անջնջելի կեցած են դեռ, և շատ աղէկ կը յիշեն բոլոր այն գայթակղելի գործքերը՝ զորոնք դուք բուճ տեղը ուրանալու ելեր էք այսօր։

Այսպէս դուք, Ատենադպիր տէր, ձեր կողմնակցութեամբը հանդերձ ազգիս և ուղղափառ հաւատքին դէմ ամեն անպատիւ միջոցները ՚ի գործ դնելէն վերջը, մէյմ'ալ կելէք ու ազգիս յարգն ու պատիւը ուղղելու մտք, Բնու Սրբոյն Պետրոսի անուամբ հրատարակեալ գրքին համար Վիեննայու Յ. Սիսիթարեանց շնորհակալ կրլաք։

Վա՛յ ան ազգին որուն յարգն ու պատիւը ուղղելու ձեզի պէս մարդիկներու ինկեր է. և որպէս զի ձեր զրպարտութեանցը լուս-

մը ըլլայ, զազգը սուրբ Աթոռին առջին բողոքովին նուաստացնելու մտօք՝ այս մասին ալ ձեռք զարկիք դուք : Թէ որ այսչափ նախանձախնդիր էք դուք փառաց սուրբ Աթոռին, հապա ինչո՞ւ համար ձեր փառասիրութեանը պատճառաւ այսչափ անարժան ու խաբէական միջոցներու ձեռք զարկիք որով սուրբ Գահին առնունք բոյոր ազգաց առջև յանիրաւի բամբասուեցաւ : Ահա ահ սիկ ձեր կրօնամօլ ու խաբէական նախանձայուզութեանը գեղեցիկ պտուղը : Իսկ մեր ազգը 'ի սկզբանէ հետէ գիտէ ու կը ճանչնայ սուրբ Աթոռին յարգը, պատիւը և իշխանութիւնը ինչպէս որ մինչև ցայսօր գրուած աղերսագիրներէն ալ յայտնի է :

Եւ արդ՝ ահա ձեր ստախօս տետրին երրորդ յօդուածին ալ պատասխանը տալով կը վերջացնենք մեր խօսքը : որովհետև, ինչպէս ըսինք, համառօտ պատասխանատուութիւննիս չի ներեր մեզի խօսքերնիս աւելի երկնցնել :

Ուստի հասկըցա՞ք հիմնց և դուք, Աթոռակալ տէր, Արիստակէս Գրիգորի տետրին զուրցած ամեն ամբաստանութեանց ճշմարտութիւնները, որոնց դուք զըպարտութիւն կոչելով, “ էքք ” ինչպէր չարաչար խօսելու՝ իրեն արդար դատը պաշտպանող անսովոր ժողովուրդեան մը վրայ, և ատոնց համբերութիւնը և լռութիւնը պատեհ առիթ մը ըրած՝ յիշեալ ստախօս տետրը կրկին լեզուով և ձեր սովորական տպագրութեան զէնքին ձեռք դրած, ուզեր էք հրատարակել, և այսպէս չի գիտցողներուն ու միամիտներուն աչքը ներկել, ու հնարագիւտ պատմութիւններով և խարդախ ձեւերով ուղածնիդ գրել : Եւ այն՝ չեմք գիտեր ո՞ր պիտի հոգւով ու ի՞նչ նախանձով, մանաւանդ թէ 'ի սէր խաղաղութեան ալ կրտէք : Ո՞ր խանդարիչք ազգիս, ո՞ր պիտի խաղաղութեան է այս որ եօթը տարիէ 'ի վեր կը վայելէ ազգը ձեր պատճառաւ : Ո՞ւր են հանգուցեալ ճշմարիտ Նախագահներուն ժամանակ ազգիս վայելած ուրախալի և երջանիկ օրերը :

” Ո՞ւր՝ անոնց խոհեմ և արդար կառավարութիւննին, որով ժողովուրդը մեկվմեկու հետ միաբանական սիրով վարեալ՝ ու ըրչներուն առջին իրաւամբ նախանձելի և գովեստի արժանի կը սեպուէր : Ո՞ւր՝ այն իմաստուն պաշտօնատէր եկեղեցականները՝ որոնք հեղութեամբ և սիրով կը հովուէին իրենց ժողովուրդը :

«Ախտս, կարծես որ անցան ասոնք, ու գրեթէ բոլորովին մոռ
 ոցուեցան, և այնպիսի Աստուածարեալ Նախագահներուն ու
 «խաղաղասէր եկեղեցականներուն հակառակ՝ յանկարծ՝ օտար ու
 «վարձկան հովիւներ և պաշտօնատէրներ յաջորդեցին: Ուստի և
 «մեկէն հարաւային դառնաշունչ հոյի մը պէս սաստիկ փոթո
 «րեկներ մեկմեկու ետև փչելով և ամեն բան շփոթելով, անցա
 «ծք ու գաւիքը տալն ու վրայ ընել սպառնացան իրենց նախան
 «ձուն ու փառասիրութեանը միայն յագուրդ մշ տալու համար,
 «զոր մինակ յիշելը անգամ բարետիրտ անձանց խիստ ցաւալի է»:

Արդ՝ ո՞ւր է Նախագահական Աթոռին փառքը, ո՞ւր է եկե
 ղեցականաց յարգը, ո՞ւր ազգին պատիւը, ո՞ւր ժողովրդեան հին
 ջերմեռանդութիւնը, ո՞ւր Պատրիարքարանին վայելչութիւնը,
 ու՞ր իշխանաց սէր և միութիւնը, ո՞ւր եկեղեցեաց պայծառու
 թիւնը, ո՞ւր ազգին ծէսերը և արարողութիւնները, ո՞ւր իր օ
 բնէրը ու կանոնները, ո՞ւր եկամտակները և հաշիւները: Աւա՛ղ
 ասոնց ամենն ալ երազ էին անցան. նախանձու և փառասիրու
 թեան անգութ ձեռաց անողորմբար մատնուեցան: Անոնք՝ ի
 իրենց տէսբօթական անկախ և խարդախ ու զարհուրելի իշխանու
 թիւնը վարելու համար՝ հարկադրեցան ասոնց ամենը խանգարել,
 բնիկ տեղացիները փռնտել, մշաստիչ օտարականները ժողովել,
 իրենց փառք ու պատիւներ տալ, զազգը երկուքի բաժնել, յա
 րատեւ խռովութեան մէջ սնուցանել, անդադար ներքին կռիւներ
 հանել, երկպառակութիւնները սաստկացրնել, որով ազգին ուժը
 և զօրութիւնը կամաց կամաց սկարսցնելով ամեն բան ջնջել, և
 յետոյ աւերակներուն տէրը ըլլալ: Վասն որոյ և ժողովուրդը յա
 րատեւ այեկոծութեան մը մէջ սրահելու համար եւ ու անոր՝ մի
 ջոն մը չի ինայեղն:

Խոտալերէն լեզուով պիղծ ու գարշելի չարամատեանը շինեցին որ
 «այսչափ այրայլեզու օտար ազգաց և ազանց ու միլիօնաւոր մարդ
 «կանց, և որ և իցէ կրօնքէ եզոզ անձանց ձեռքը տեսնուեցաւ.
 «ուր՝ ազգին պատուոյն ամենեւին չի ինայելով, մեծն ու պղտիկը,
 «եկեղեցականն ու աշխարհականը անամօթաբար բամբասեցին:
 «Երբքին կռիւները ու անոնց պատճառները ստութեամբ ու
 «խարդախութեամբ օտար ազգաց ալ յայտնեցին: Վերջապէս՝

ողերար խայտառակել, երգիծաբանութիւններ, անիրաւ ու ան-
ճշտնի դատողութիւններ, կերպ կերպ անվայել հեգնութիւն-
ներ, անտեղի զրուցուածներ, ծածուկ ու հրապարական սպառ-
ողնալիքներ, ծանր ու նենգաւոր զրաբարտութիւններ, խորամանկ
ճամբաստանութիւններ, շինծու ու խարդախ պատմութիւններ :
Ասոնց ամենը կրսեմք թէ այն դժոխային չարամատեանին մէջ
ու թէ օտար լեզուով օրագրի մը մէջ տեսնուած ատեն, ո՞ր բա-
րբեսիրտ անձը կրնայ իր սրտին հառաչանքը զսպել, ու աչքին
ճարտունքը դադրեցնել : Անշուշտ շատ մեծ ցաւ զգաց նոյն իսկ
Տէրութիւնն ալ, երբոր տեսաւ ու յայտնի իմացաւ որ այնչափ
հոգւով շինամով առատածեռնած իր հպատակ ժողովրդեան հան-
դարտութիւնը, երջանկութիւնը և հանգստութիւնը ոմանք վեր
ի վայր խռովելու կը յանդգնին :

Ազգիս պատուոյն համար այսչափ խօսելէն վերջը, ձեզի կը
դառնամք ո՛ր Հայրենակիցք մեր :

Ահա՛ Ասիոյ քաղաքները, գիւղերը, ահագին գետերը, խոր
ձորերը, ձիւնապատ լեռները, անչէն անապատները, բոլոր այս
ակննատես վկաները կրսեմք կը պատմեն թէ՛ քսանը հինգ տարի
առաջ Կ=Պօլիս ուղղախառ Հայ Բաթովիկ ժողովուրդը՝ իրենց
հաւատքը, ու իրենց ազգային իրաւունքները պահելու համար՝
իրենց հայրենիքէն, տունէն տեղէն բաժնուելով ու վերջին ազ-
բատութեան հասնելով՝ եկան հոս տեղուանք խեղճութեամբ պան-
դխտեցան երկու և երեք տարի : Դո՛ւք էք այս անուանի ժողո-
վուրդը : Դո՛ւք անոր հարապատ ծնունդը : Անանկ էնէ զօրանանք
ինչպէս մինչեւ ցայսօր՝ նոյնպէս և միշտ մեր հայրենի ուղիղ հա-
ւատքին վրայ պիտա կեցած, մեր ամեն արարողութիւններնուս
ու ծէսերնուս նախանձախնդիր ըլլանք : Ազգային իրաւունքնե-
րուն և օրինաց հոգւով չափ պաշտպան կենանք, որով մեր ազ-
գայնութիւնն ալ չի կորսուի : Մենք ենք ազգը, մեր են ամեն
սեպհականութիւնները, ուստի և իրաւամբ անոնց պահպանու-
թիւնն ալ մեզի կիսնայ : Ներքին ընտանի թշնամիներէն զգուշա-
նանք, Հանդարտութեամբ և անխուով սրտիւ մեր արդար դատը,
մեր զրաբարտուած սուրբ հաւատքը, մեր բամբասուած համբաւը,

ու պատիւը հոգւով չափ պաշտպանենք . Մեր աչքը ամենեին չի
կարենայ վախցնել և ոչ բան մը , զի մեր կողմն է Ճշմարտութիւնը .
վասն որոյ թէ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԸ և թէ մեր ՕԳՈՍՏԵՓՆՈՒ ԻՆԲԵՆԱԿԱԼԸ
կը հաճին անշուշտ կատարելու մեր արդար վախաքը , և կազա-
տի ազգը բոլոր այդ խոովարար մարդիկներէն .

Այլն իւրանցը պաշտպան
Տառնասոր անյ մը :



In SBG.